

ԹՈՐԳՈՄ ՓՈՍՏԱՃՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՎ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2009

ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի խորագրին մեջ հիշված «Ավետարանականները» բառով պետք է հասկնալ Հայ Ավետարանական եկեղեցու շարք մը հոգևորականները:

Այդ հոգևորականներեն Հայ Ավետարանականները վերջերս կատարեցին շարք մը պատմական խեղաթյուրումներ, նաև անիրաւ ոտնձգություններ Հայաստանյայց Եկեղեցւո իրավասութեանց ծիրեն ներս:

Անոնց կատարած այդ անճիշտ խեղաթյուրումներուն և անհարկի ոտնձգութեանց հերքումն է այս գիրքը:

Ինչպես պիտի նկատեն մեր ընթերցողները, դավանական այս վեճերուն առիթ տվողները եղան իրենք՝ «Ավետարանականները»:

Սկիզբը մենք գտնվեցանք հույժ քաղաքավար և ազնիվ: Շատ պատշաճ և հարգալիր ոճով ցույց տվինք իրենց կատարած հակապատմական խեղաթյուրումները և անիրավ ոտնձգությունները՝ կոչ ընելով նաև, որ դադրին մասն անտեղի կրոնական վեճեր հարուցանել:

Ամբողջապես անանձնական այս վեճը, տարաբախտաբար, «Ավետարանականները» ոչ թե լոկ շարունակեցին, այլ նաև փոխադրեցին անձնական մարգադաշտ:

Հատկապես Ավետարանական հոգևորականներ և Վեր. Վ. Թութիկյանի մանկլավիկներեն մին վարձկանի ձեռքով գրված գռեհիկ հողվածով մը, ամենեն պժգալի գրութեամբ իջավ հրապարակ: Ավետարանական ոգիին գլխովին հակադիր՝ այդ եպերելի արարքին անդրադառնալն անգամ նախատինք կը համարինք մենք:

Պարտինք հոս հիշել նաև, որ Հայ Կաթողիկե հոգևորականներու հետ մեր էապես դավանական վեճին մասնակցողներեն մին անիրավ և անվայել ամբաստանութեամբ մը արատավորել փորձեց Ամենայն Հայոց մեր ազգընտիր Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի

անձն ու գործը: Ան, որ մարմնացումն է մեր սրբության և հայրենասիրության:

Կատարված այդ հերյուրածո ամբաստանությունն ու մեր կողմն ներկայացված հերքումը, այս գրքի մեջ պիտի կարդան մեր ընթերցողները:

Այս գրքին մեջ ներկայացված փաստերը, ինչպես նաև հայ և օտար պատմիչներն մեջբերված վկայությունները, անուրանալիորեն կը հերքեն վերոհիշյալ հոգևորականներու և անհատներու կողմն հերյուրված բոլոր ստությունները և անիրավ իրացումները:

Ժամանակագրական կարգով հոս հիշատակված կան նաև պատմական անցքեր և դեպքեր, որոնք մասամբ Հայաստանյայց Եկեղեցվո 1700-ամյա փառքն ու պարծանքը կը պատկերացնեն:

Ահա թե ինչու, մենք օգտակար համարեցինք այս հոդվածներուն առանձինն հատորով հրատարակությունը:

Այս հոդվածներուն մեծ մասը հրատարակված էր Լոս Անջելըսի «Նոր Կյանք» շաբաթաթերթին մեջ:

Գրքի Բ մասի վերջին վեց հոդվածները, սակայն, մնացած էին անտիպ: Պատշաճ նկատեցինք հրատարակությունը մեր կողմն պատրաստված հին ուսումնասիրության մը, որ գրված էր ավելի քան քառասուն տարիներ առաջ՝ «Հայաստանյայց Եկեղեցվո Ծագումն ու Զարգացումը» խորագրով:

Այս ուսումնասիրությունը ժամանակին հրատարակված էր «Հայրենիք» ամսագրի մեջ: Նույն ուսումնասիրության անգլերենը ևս հրատարակված էր Armenian Review պարբերագրքի մեջ՝ Դեյմս Մանտայանի կողմն թարգմանված:

Հայ ազգի քրիստոնեության դարձի 1700-ամյակի առիթով կարևորությամբ շեշտենք կրկին, որ Հայստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եղավ միշտ ճշմարիտ հոգևոր Մայրը համայն հայ ժողովուրդին:

Այս տողերը գրողը՝ որպես համեստ մեկ զավակը նույն Եկեղեցվո, անոր ծառայած ըլլալու հոգեկան բավարարութենեն դուրս այլ բավարարություն չէ փնտրած:

ՌՈՐԳՈՄ ՓՕՍԹ-ԱՃԵԱՆ

Ա ՄԿՍ

**ԿԱՐԵՎՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՆԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԻ
ՃՇԳՐԻՏ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

**279-Ն Է ՆԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԻ
ՃՇԳՐԻՏ ԹՎԱԿԱՆԸ**

Պատմականորեն համայն աշխարհի կողմե ընդունված իրողությունն է, որ հայեր եղան առաջինը, որ Քրիստոնեությունը ընդունեցին իրենց համար որպես պետական կրոն:

Հայոց Քրիստոնեության դարձի ընդունված թվականը առհասարակ եղած է 301 տարին:

Այս թվականը անճիշտ թվական մըն է սակայն:

Այս թվականին անճիշտ ըլլալը առաջին անգամ ստուգող և ճիշտ թվականը հայտնաբերողը եղավ մեծանուն բանասեր, գիտնական Դոկտոր Ստեփանոս Մալխասյանցը: Ան երկարատև ուսումնասիրություններ և պրպտումներ վերջ լույս ընծայեց մեր պատմահոր՝ Մովսես Խորենացիի Պատմագիրքը 1940 թվին Երևանի մեջ: Գրքին կընկերանար նաև 300 էջերու մեջ խտացած իր կարևոր ուսումնասիրությունն ու ծանոթությունները: Հոն անվանի գիտնականը կապացուցանե Մովսես Խորենացիի Պատմության վավերականությունը, նաև ժամանակագրությանը ճշգրտությունը:

Դոկտոր Ստեփանոս Մալխասյանց անհերքելի փաստերով կապացուցանե նաև, որ Հայոց Քրիստոնեության դարձի ճշգրիտ թվականը ոչ թե 301 տարին է, այլ 279 թվականն է: Այս թվին է նաև, որ Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ տեղի ունեցավ հիմնարկեքն ու կառուցումը Ս. Էջմիածնի Մայր Տաճարին:

ԻՆՉ ԵՆ ԱՅՍ ԹՎԱԿԱՆԸ ՆԱՍՏԱՏՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՊԱՅՈՒՅՅՆԵՐԸ

Մեր հին մատենագիրները կը վկայեն, որ Տրդատ թագավորի գահակալության 17-րդ տարին, Հայեր Քրիստոնեութունը ընդունեցին որպես պետական կրոն: Արդ՝ ե՞րբ է, որ Տրդատ տիրացավ իր գահին. – պատմականորեն գիտենք, որ Տրդատի հայրը՝ Խոսրով թագավոր, սպանվեցավ պարսից Արտաշիր Սասանյան թագավորի դավադրությամբ և Անակի ձեռքով 236 թվին: Այդ թվականեն ետք Հայաստան մատնվեցավ անիշխանության, որ տևեց շուրջ 27 տարիներ՝ մինչև Արտաշիր Սասանյան արքայի մահը:

Արտաշիրի մահվրենն ետք Հայաստանի մեջ զեպքերը կը դառնան ի նպաստ Հայաստանի, և Տրդատ կը տիրանա իր թագավորական գահին 263 թվականին:

Մեր մատենագիրներեն Մովսես Խորենացի և Սեբեոս պատմիչ կը վկայեն այս բոլորը և կը հաստատեն, որ արդարև Տրդատ իր արքայական գահին տիրացավ 263 թվին: Կը հետևի ուրեմն, որ Տրդատի թագավորության 17-րդ տարին՝ 279-ին, Հայաստան պաշտոնապես Քրիստոնեութունը ընդունեց որպես պետական կրոն:

Հակառակ պատմական այս անառարկելի վկայություններուն, ի՞նչ է եղած պատճառը սակայն, որ ընդհանրապես 301 տարին նկատված է որպես Հայաստանի Քրիստոնեության դարձի թվական:

Պատճառը հետևյալն է: Մեկ քանի պատմագիրներ՝ Հայոց Տրդատ թագավորի գահակալության տարին կապեր են Հռովմի կայսր Դիոկղետիանոսի իշխանության տիրանալու տարվույն հետ, որ 284 թվականն է: Եվ այս թվականին վրա բարդելով 17 տարի՝ եզրակացուցած են, որ Հայաստանի Քրիստոնեության դարձի թվական պետք է համարել 301 թվականը: Դոկտոր Ստեփանոս Մալխասյանցի «Մովսես Խորենացիի Հայոց Պատմությունը» երկին ուսումնասիրության և ծանոթագրության բաժնին մեջ (էջ 573-581) տրված ամբողջական և ճշգրիտ տվյալները, Հայ Արշակունյաց

Թագավորներու, պարսիկ Սասանյան արքաներու և հռովմեական կայսրերու ժամանակագրությունները, ինչպես նաև մեր ներկայացուցած պատմական վկայությունները բավ են ինքնին հաստատելու, որ Հայոց Քրիստոնեության դարձի թվականը 279 տարեթիվն է և ոչ թե 301-ը:

Կը ճշգրտի նաև, որ «Հօրն մերոյ» Սրբոյն Գրիգորի Լուսավորչի հայրապետական ժամանակաշրջանը կըլլա 279-են մինչև 325 թվականը:

Ներկա ժամանակագրական այս կարևոր աշխատասիրությունը, ինչպես պիտի նկատեն մեր ընթերցողները, պատրաստած ենք հիմնվելով պատմագետ, գիտնական Ստեփանոս Մալխասյանցի բանասիրական լուրջ հետազոտությանց և վկայությանց վրա: Այդ պատճառով ալ անհրաժեշտ նկատեցինք, հակիրճ գիծերու մեջ ներկայացնել հոս, մեծանուն գիտնականին կյանքն ու գործը:

Ո՞Վ Է ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍՅԱՆՅԸ

Ակադեմիկոս, բանասեր, պատմագետ և գիտնական Դոկտոր Ստեփանոս Մալխասյանցը ծնած է 1857 թվին Ախալցխայի մեջ, իսկ մահացած է 1947 թվին Երևանի մեջ:

Ան եղած է բացառիկ արժանիքներու տեր գիտնական մը և թողած է անկորնչելի և հարուստ վաստակ մը՝ ի նպաստ Հայ Հին Մատենագրության, մեր նոր գրականության և Հայ Մշակույթի գանձարանին:

Ան իր նախնական ուսումը ստացած է Ախալցխայի ծխական վարժարանին մեջ, իսկ երկրորդական ուսումը ստացած է Ս. Էջմիածնի Ճեմարանին մեջ: Ան նաև իր մասնագիտությունը կատարելագործած է Պետերսբուրգի Համալսարանի Արևելյան Լեզուներու Ֆակուլտետի մեջ:

Իր առաջին լուրջ աշխատասիրությունը եղած է Ստե-

փանոս Տարոնացիի (Ասողիկ) «Պատմություն Տիեզերական» գործի թարգմանությունն ու լայն ծանոթագրություններով ուսումնասիրությունը՝ տպված Պետերսբուրգի մեջ 1888 թվին:

Ան եղած է նաև բառարանագետ: Ան է, որ առաջին անգամ դասական հայերենի ուղղագրությամբ լույս ընծայեց Հայերեն Լեզվի Լիակատար Բացատրական Բառարանը՝ չորս ընդարձակ հատորներով:

Այս գործը հետագային երկու անգամ ևս վերահրատարակվեցավ, նախ՝ Լիբանանի մեջ, հետո՝ նաև Թեհրանի մեջ:

Դոկտոր Ստեփանոս Մալխասյանց՝ որպես հմուտ բանասեր և պատմաբան, լույս ընծայած է նաև մեր շարք մը հին մատենագիրներու գործերը՝ ընդարձակ ուսումնասիրություններով, ինչպես Պատմությունը՝ Փափսոս Բյուզանդի, Սեբեոսի, Ղևոնդ Մեծի, Ղազար Փարպեցիի և, որ ամենեն կարևորն է, մեր պատմահայր Մովսես Խորենացիի:

Մեծանուն գիտնականը, մեր Պատմահոր «Հայոց Պատմության» շատ մը ձեռագիրները իրարու հետ բազմաթիվ, լույս ընծայած է հնագույնն ու ամենեն վավերականը: Ան նաև քննարկած է Մովսես Խորենացիի մասին հայ և օտար բանասերներու լույս ընծայած ուսումնասիրությունները: Անոնցմե ոմանց կողմե կատարված աննպաստ և անճիշտ ենթադրություններն ու վերագրումները մեկ առ մեկ հերքած է և մեր Պատմահայրը, որպես հայ ժողովուրդի պարծանքն ու հպարտությունը, գետեղած է իր բարձրագույն պատվանդանին վրա:

Դոկտոր Ստեփանոս Մալխասյանցի այս կարևոր աշխատասիրությունը լույս ընծայված է 1940 թվին Երևանի մեջ և բարձրորեն գնահատված է ժամանակակից շատ մը այլ բանասերներու կողմե:

Մովսես Խորենացիի Հայոց Պատմության այս գիրքը վերահրատարակվեցավ նաև Գահիրեի մեջ 1953 թվին «Հուսաբեր»-ի տպարանը:

Մեր ժամանակակից գրագետ Շավարշ Նարդունի գրքի

մասին դրվատալից հողված մը գրեց նույն տարին «Հայրենիք» օրաթերթի մեջ: Շավարշ Նարդունի կոչ ուղղեց նաև Հայաստանյայց Եկեղեցվո կաթողիկոսներուն, որպեսզի անոնք մասնավոր կոնդակով հրահանգեն, որ Հայ Եկեղեցիներուն մեջ ամեն Կիրակի Մովսես Խորենացիի Հայոց Պատմութենեն հատված մը ընթերցվի:

Գրագետին այս կոչին դեմ ընդվզեցան մեկ կամ երկու Հայ կաթողիկ վարդապետներ, որոնք բուռն կերպով քննադատեցին գրագետը շարք մը սնոտի պատճառաբանություններով:

Շավարշ Նարդունի իր հատու գրիչով իրենց տեղերը նստեցուց այդ Հայ կաթողիկ վարդապետները: Ան չվարանեցավ նաև հայտարարելու, որ մեր Պատմահայր Մովսես Խորենացիի «Հայոց Պատմությունը» շատ ավելի Սրբազան Մաքրյան մըն է հայ ժողովուրդի համար, քան Հին Կտակարանը:

Է

£ 500

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆՎԱԾ ՁԵՆ

(ՎԵՐ. Վ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԻՆ ԱՌԹԻՎ)

Հայաստանի մեջ քրիստոնեությունը որպես կրոնք հռչակման 1700-ամյակի առթիվ, հայ ավետարանական եկեղեցական մը՝ Վերապատվելի Վահան Թուլթիկյան, «Նոր օր» շաբաթաթերթի հունվար 20, 2001 թիվին մեջ, ունի հոդված մը: Այս հոդվածը իր ընդհանուր գիծերուն մեջ՝ զեկույց մըն է հոգևոր այն աշխատանքներուն և ծրագրերներուն մասին, զորս Ավետարանական Միությունը կը ծրագրե ի գործ դնել Հայաստանի մեջ:

Հոդվածը գրված է քրիստոնեական քարոզչություն և Աստվածաշունչի տարածման խանդավառ սիրով և հավատքով:

Վերապատվելի Վահան Թուլթիկյան՝ Հայ Ավետարանական եկեղեցվո ծառայող հարգված հոգևորական մըն է: Ան ունի տարիներու ծառայություն զանազան հայ ավետարանական համայնքներե ներս, և հեղինակ է բազմաթիվ հայերեն և անգլերեն կրոնաշունչ երկասիրությունց, որոնց մեջ միշտ ալ կարտացոլա քրիստոնեական կրոնքի և Ավետարանական եկեղեցու հանդեպ ունեցած իր սերն ու նվիրումը:

Եվ սակայն հարգելի Վերապատվելին, իր այդ հոդվածին մեջ ունեցած է շարք մը արտահայտություններ, որոնք ոչ թե լոկ հակապատմական են, այժմ նաև՝ հեռու են տրամաբանական ըլլալէ: Թվենք մեկ քանին:

1. Վեր. Թուլթիկյան Հայ Ավետարանական եկեղեցիները կը վերանվանեն «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի» անունով:

2. Ան կը գրեն, որ «Հայ եկեղեցի» ըսելով մենք պետք է հասկնանք ոչ թե լոկ «Հայոց Առաքելական եկեղեցի, այլ նաև՝ Հայ Կաթողիկե (կաթոլիկ) և Հայ Ավետարանական եկեղեցիները»:

3. Ան կը գրեն նաև, թե «1700-ամյակի տոնակատարումը ոչ մեկ եկեղեցիի մենաշնորհը չէ, այլ բոլոր Հայ եկեղեցիներուն»: Եվ այդ «Հայ եկեղեցիներու» շարքին մեջ՝ կը գետեղեն նաև «Հայ կաթոլիկ» և «Հայ Ավետարանական» եկեղեցիները:

Այսպես, գրչի մեկ հարվածով, Վերապատվելին փորձ մը կընեն անիրավորեն կապտելու Հայոց եկեղեցուն պատկանող պատմական շարք մը իրավունքներ և իրավասություններ, որոնց իրավունքը՝ որպես բողոքական (Ավետարանական), չունի ինք և չունին Հայ Կաթոլիկները:

Խոսինք փաստերով.

1. Հայաստանյայց եկեղեցի (Հայաստանցիների եկեղեցի) անվանակոչումը հատկապես և մասնավորապես (*exclusively*) կը պատկանի մի միայն Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցվո: Այն եկեղեցվո, որ հիմնվեցավ 1700 տարիներ առաջ, ձեռամբ հորն մերո Սրբույն Գրիգորի Լուսավորչին. և հանուր աշխարհեն ճանաչվեցավ որպես՝ «Հայաստանցիներու եկեղեց», (Հայաստանյայց եկեղեցի):

Այդ թվականին (301) Հռոմեական Կաթոլիկ եկեղեցին գոյություն չուներ դեռ, և ոչ ալ՝ բողոքական (Ավետարանական) հարանվանությունը: Գոյություն ուներ միայն «Հայաստանյայց եկեղեցին»՝ որպես պետական կրոնքը Հայաստան Աշխարհի:

«Բողոքական» («Ավետարանական» անունը վերջեն տրված անուն մըն է) հարանվանությունը, հետսամուտ, օտար դա-

վանություն մըն է մեր մեջ, որ Պոլսի և մեր գավառներուն մեջ մուտք գործեց 19-րդ դարու կեսերուն օտար միսիոնարներու ձեռքով:

Այս միսիոնարները այդ տարիներուն հաջողեցան շարք մը չքավոր հայեր դավանափոխ դարձնել՝ անոնց ընծայելով ալյուր, պարեն, նաև կրթություն տալով անոնց անչափահաս զավակներուն:

Պատմական այս եղելությունները կը հաստատեն ինքնին, որ «բողոքական» կամ «Ավետարանական» հարանվանությունը օտարներեն եկած է մեր մեջ:

Հայաստանցիներուն պատկանող դավանությունը չէ այդ:

«Հայաստանյայց» անունը հատուկ անուն է և ինքնությունը հատկանշող վերադիրն է լոկ՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, ճիշտ այնպես ինչպես «Հռովմեական» անունը հատուկ անունն է Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցու (Roman Catholic Church):

Հետևապես, ո՛չ Ավետարանական և ո՛չ ալ այլ հարանվանություններ իրավունք ունին գործածելու այդ հատուկ անունը («Հայաստանյայց») Հայ Եկեղեցվո:

2. «Հայ Եկեղեցի» կոչումը, ևս հատկապես և մասնավորապես, կը պատկանի մի միայն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, ճիշտ այնպես ինչպես «Հույն Եկեղեցի» կոչումը կը պատկանի լոկ «Հույն Օրթոդոքս Եկեղեցվո»:

Հունաստանի մեջ ալ կան Հույն Բողոքականներ (Ավետարանականներ) և Հույն Կաթոլիկներ: Բայց այս Հույն Բողոքականները և Հույն Կաթոլիկերը իրավունքը չունին «Հույն Եկեղեցի» կոչվելու:

Անոնց իրավական անուններն են «Հույն Բողոքական Եկեղեցի», ինչպես մեր մեջ՝ Հայ Ավետարանական Եկեղեցի» և «Հայ Կաթոլիկ Եկեղեցի»:

Այս պարզ և տարրական ճշմարտությունը միթե չի՞ գիտեր Վերապատվելի Թուֆիկյան...

Անշուշտ գիտե, բայց կը թվի մեզի, որ ան ունի հետին այլ դիտավորություն, որուն պիտի անդրադառնանք:

4. Վերապատվելի Թուֆիկյան կը գրե, որ «1700-ամյակի տոնակատարությունը ոչ մեկ եկեղեցիի մենաշնորհը չէ»:

Այս արտահայտության մեջ կա ինքնահավանություն մը, որ խոտոր կը համեմատի մեր ճանչցած պատվելի Վահան Թուֆիկյանի անձին և իր հոգևոր հանգամանքին հետ:

«Ոչ մեկ եկեղեցի» անորոշ արտահայտությամբ՝ Վեր. Թուֆիկյան որոշապես ըսել ուզածը, հետևյալն է. «1700-ամյակի տոնախմբությունը Հայաստանյայց Եկեղեցվո մենաշնորհը չէ»: Կավելցնե նաև, որ 1700-ամյակը քրիստոնեությունից տարեդարձն է Հայաստանի մեջ (birthdate):

Ճշտում – Քրիստոնեությունից ծնունդը Հայաստանի մեջ տեղի ունեցավ առաջին դարուն, երբ Թադեոս և Բարդուղիմեոս՝ Քրիստոսի երկու առաքյալները Հայաստան եկան 35 թվին մինչև 69 տարիներուն և քրիստոնեությունը քարոզեցին: Այդ քարոզությանց որպես հետևանք՝ բազմահազար հայեր քրիստոնյա դարձան: Հայոց Սանատրուկ Թագավորի դուստրը ևս, Սանդուխտ, ընդունեց քրիստոնեությունը և նահատակվեցավ հորը կողմե: Ան եղավ քրիստոնեության առաջին վկայուհին:

Երկու առաքյալներն ալ նահատակվեցան Հայաստանի մեջ: Անոնց հաջորդեցին շուրջ ութը քրիստոնյա հայրապետներ, որոնք քրիստոնյա հավատացյալները չարահարաբար պահպանեցին, մինչև մեր ազգին քրիստոնյա դառնալը:

2001 թվականը, 1700-ամյա ծննդյան տարեդարձն է Հայաստանյայց Եկեղեցվո, որովհետև այդ թվին է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ հիմնեց Հայաստանյայց Եկեղեցին և ինք եղավ Հայ ժողովուրդի առաջին կաթողիկոսը:

Քրիտոնեական առաջին Տիեզերական ժողովը գումարվեցավ 325 թվին: Այդ ժողովին մասնակցեցանք նաև մենք, և ճանաչվեցանք որպես «Հայաստանյայց Եկեղեցի» անունով (Հայաստանցիների Եկեղեցի):

2001 թվականը 1700-ամյակն է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնարկության: Համաձայն Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշապատում տեսիլքին (Ագաթանգեղոս պատմիչի վկայությամբ)՝ Միածին Հիսուս երկինքեն իջավ Հայաստան և հիմը դրավ առաջին հայ քրիստոնյա տաճարին և որ կոչվեցավ «Էջ Միածին» (Միածինը իջավ):

Հայաստանյայց Եկեղեցվո ծնունդով, ծնունդ առին նաև մեր մշակույթը, մեր ճարտարապետությունը, մեր գիրն ու գրականությունը և մեր պատմությունը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Սահակ Հայրապետ, Ս. Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորենացի, Եղիշե, Անանիա Շիրակացի, Ս. Ներսես Շնորհալի, Գրիգոր Տաթևացի:

1700-ամյակը տարեդարձն է նաև Հայաստանյայց Եկեղեցվո այս եռամեծար տարրերուն, որոնց շարքը կրնայինք երկարել մինչև Խրիմյան Հայրիկ, Կոմիտաս Վարդապետ և շատ այլ մեծություններ, որոնք Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովուրդի փառքն ու պարծանքն են, որովհետև «Հայաստանյայց Եկեղեցին» և «Հայ ժողովուրդ»ը անքակտելի միություններ են:

Պատմական այս վկայությունները կը հաստատեն, որ 1700-ամյակի տարեդարձը հատկապես կը պատկանի Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և (կրնդգծենք Վերապատվելին բառը) մենաշնորհը:

ՄՏԱԿՏՈԳԻՉԸ ԵՎ ԸՆԴՎԱԶԵՑՈՒՅԻՉԸ

Վերապատվելի վ. Թուրթիկյան կը գրե, որ 1700-ամյակի առթիվ, «Հայ Ավետարանական Համաշխարհային Խորհուրդը» (որուն նախագահն է ինք), հինգ եկեղեցական միություններով, տասնյակ մը երիտասարդական կազմակերպություններով, 150 եկեղեցիներով, ծրագրած են առաջիկա Օգոստոս ամսուն, Հայաստանը ողողել հոգևոր դաստիարակության կեդրոններով, Կիրակնօրյա դպրոցներով, պատանյաց, երիտասարդաց, չափահասներու և տարեցներու քրիստոնեական կազմակերպություններով և Աստվածաշունչներով, որպեսզի (Հայաստանի ժողովուրդը) առաջնորդեն դեպի Հիսուս Քրիստոս և անոնց ճամբեն աստվածակերտ դաստիարակություն:

Հայ Ավետարանական Խորհուրդի միսիոնարական այս վիթխարի ծրագիրը մեզ ապշեցնելով հանդերձ չուրախացներ, այլ ընդհակառակը՝ կը մտահոգե մեզ: Թ՛վենք, թե ինչու.

1. Ի՞նչ է պատճառը, որ Հայ Ավետարանական (բողոքական) եկեղեցին»

150 տարիներե ի վեր (իբ գոյություն գալեն ի վեր մեր մեջ), երբեք չէր համարձակած ինքզինք «Հայաստանյայց» և «Հայ Եկեղեցի» անվանել, բայց հանկարծ, մեր 1700-ամյակի առթիվ, և իրենց ծրագրած վերոհիշյալ միսիոնարական հսկա գործունեություն նախօրյակին՝ Հայաստանի մեր աղքատ և զրկված ժողովուրդին առջև կը փափագին ներկայանալ «Հայաստանյայց» և «Հայ Եկեղեցի» անուններով: Անուններ, որ իրենց երբեք չեն պատկանած և չեն ալ պատկանի:

Բայց անմեղ ժողովուրդին կրնան տալ այն պատրանքը, որ իրենք ալ «Հայաստանյայց Եկեղեցվո» մեկ տարբերակն են:

Ապշեցուցիչն այն է, որ այս գետնի վրա անոնք նույնիսկ մասնակցիլ կը կամենան «Հայ Կաթոլիկ» եկեղեցվո հետ,

անոնց ևս ընծայելով «Հայաստանյայց» և «Հայ Եկեղեցի» անունները: Անոնց, որոնց երգվյալ «բողոքող» հակառակորդները եղած են դարեր շարունակ:

Հարկ կա՞ հարցնելու, թե որո՞ւ պատրանքը որո՞ւ է, որ կը տրվի: Թող պարզ ըլլա, սակայն որ «Հայաստանյայց Եկեղեցվո» անունները աճուրդի հանված չեն:

2. Վեր. Վահան Թուլթիկյան հանուն իր Համաշխարհային Ավետարանական Միության, կըսե նաև հետևյալը. «Հայաստանի ժողովուրդը ամբողջ յոթանասուն տարիներ քրիստոնեական դաստիարակությունից զրկված էր», այդ պատճառով ալ Հայ Ավետարանչական Միությունը Հայաստան կերթա հակա ծրագիրներով, քրիստոնեություն քարոզելու մեր ժողովուրդին:

Համայնական վարչակարգի հակակրոնական ամենեն դժան տարիներուն, 1930-ական թվականներուն, մեր հայրենիքի մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո հոգևորականները իրենց կյանքի գնով բաց պահեցին հայոց եկեղեցիները և իրենց կարելի բոլորանվեր միջոցներով քրիստոնեությունը վառ պահեցին Հայաստանի մեջ:

Ամենայն Հայոց Տ. Տ. Խորեն Վեհ. Կաթողիկոսը իր կյանքի վրա տվավ պահպանելու համար Ս. Էջմիածինը:

Հայաստանի մեջ այս հակակրոնական տարիներուն, Հայ Ավետարանական հոգևորականներ հեռու մնացին Հայաստան երթալե կամ Հայաստան մնալե՝ իրենց մորթը պաշտպանելու համար:

Հիմա սակայն, երբոր կյանքի ապահովություն կա և հակակրոնական հալածանք չկա, հիմա՝ Հայ Ավետարանական միսիոնարներ վիթխարի ծրագիրներով Հայաստան կը ներխուժեն քրիստոնեություն քարոզելու:

3. Ի՞նչ է այս քարոզություն նպատակը:

Հակառակ յոթանասուն տարիներու կրոնական հալածանքներուն, Հայաստանի մեր ժողովուրդը մազազափ չհեռացավ

քրիստոնեություն: Չհեռացավ Հայաստանյայց Եկեղեցվո իր պապենական դավանութենեն:

Արդ, հարց է գիտենալ թե ի՞նչ է ճշմարիտ նպատակը, Հայ Ավետարանականներու դեպի Հայաստան ծրագրած այս լայնածավալ միսիոնարական արշավանքին:

Իրապես քրիստոնեություն քարոզել է: Եթե արդարև այդ է, և եթե այդ քրիստոնեական քարոզչությունները պիտի կատարվին գործակցաբար և ընդ հովանավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և Ս. Էջմիածնի, մենք ազգովին պիտի գնահատենք Հայ Ավետարանականներու ձեռնարկները:

Բայց եթե այդ Ավետարանական միսիոնարները իրենց ծրագրած ձեռնարկները կը կատարեն Հայաստանյայց Եկեղեցվո մեր զավակները հեռացնելու իրենց դարավոր պապենական դավանանքեն, և զանոնք առաջնորդելու դեպի Ավետարանական (բողոքական) փարաիս, մենք այդ արարքը պիտի նկատենք պառակտիչ և ազգաքանդ արարք մը:

Եթե Հայ Ավետարանական Միություն միսիոնարները համարձակին նույնիսկ մեկ հատիկ հայ անհատ հեռացնել իր պապենական դարավոր հավատքեն (Հայաստանյայց Եկեղեցիեն), և առաջնորդեն զինք դեպի «Ավետարանականություն» (բողոքականություն) և այդ արարքը ինքնին մեղանչում մը պիտի ըլլա Աստուծո պատվիրաններուն դեմ: Մեղանչում՝ քրիստոնեական սկզբունքներու դեմ:

Քրիստոնեություն քարոզելու պատճառաբանությունամբ, կատարվող նման ոտնձգություններ, թույլատրելի չեն, ներելի ալ չեն:

Կը հուսանք, որ Հայ Ավետարանական Միությունը, հեռու կը մնա նման ընթացքի մը մեջ գտնվելէ:

Այս հողվածին մեջ հիշատակված կեդրոնական դեմքը՝ Վերապատվելի Վահան Թուֆիկյան, խնամիական կապով մեզի համար եղած էր սրտի մոտ անձ մը:

Ահա թե ինչու հարկ կը զգանք հիշել հոս Արիստոտելի պատմական և դասական մեկ խոսքը.

«Պղատոնը կսիրեմ, բայց ճշմարտությունը կը գերադասեմ»:

«Ճշմարտությունը» Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին է, որուն հանդեպ միշտ ալ հարգալիր եղած է անցյալին Վեր. Թուֆիկյան և կրկնած, որ «մեր մայր եկեղեցին» է ան:

1700-ամյակի դարադարձը թող ըլլա բարեպատեհ առիթ, որ «Հայ Եկեղեցիեն» բաժանված է օտար հարանվանությանց հառած զավակներ վերադառնան իրենց մայրենի Եկեղեցվո գիրկը:

Վեր. Վահան Թուֆիկյան թող զայս ընդունի որպես հրավեր՝ վերադառնալու «ճշմարտության», Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

a a a

ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆԱԲԱՐՈՂՆԵՐ

(ՀԱԿՈՒՑ ԼՈՒՍԱՐԱՐՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ

ՊԱՐԳԵՎ Ն. ՏԱՐԱԳԾՅԱՆ)

Ա.

Նոր կյանք» շաբաթաթերթի Փետր. 9-ի թվին մեջ, մեր «Ազգրած «Հայաստանյայց Եկեղեցվո Անունները Աճուրդի Հանված Հեն» հոդվածը արժանացավ ջերմ գնահատման: Եվ սակայն եղան նաև դժգոհներ, որոնք մեկ քանի գիրերով հրապարակ եկան մեզի դեմ:

Անոնցմե մին, որ կը ստորագրե Հակոբ Լուսարարյան «Նոր Օր», «Նոր Կյանք» և «Նոր Հայաստան» թերթերուն մեջ, «Ի Սեր Ճշմարտության» խորագրով հոդված մը գրած է, ուր ճշմարտությունը կխաչվի ամեն տողի մեջ:

Մեր հոդվածը գրված էր խիստ հարգալիր ոճով: Վիրավորիչ ոչ մի անկարգություն կատարած էինք անձերու և հավաքականությանց հանդեպ:

Հայ Ավետարանական Եկեղեցվո մասին մեր կատարած շարք մը վկայությունները ևս գրված չէին Հայ Ավետարանականության դեմ, և ոչ ալ ընդդեմ մեր հայ ավետարանական եղբայրներուն և քույրերուն:

Հայ Ավետարանական համայնքեն ներս կան շատ թիվով օրինակելի հայրենասերներ, որոնց գործն ու նվիրումը կը գնահատե ամեն հայ անխտիր:

Եվ սակայն, մեր հոդվածը գրված էր հատկապես՝ մեր Եկեղեցվո անուններու անիրավ գորածածություն դեմ, զոր վերջերս համառորեն կը կիրարկեն շարք մը Հայ Ավետարանական հոգևորականներ, և մենք պատճառներ ունինք հավատալու, որ

այդ կը կատարվի հետին նպատակով, որուն մասին պիտի անդրադառնանք:

Հողվածագիր Հ. Լուսարարյան, մեր գրածները հերքելու փաստ չունենալուն պատճառով, հրապարակ իջած է շարք մը անպատկառ, անվայել և հայհոյանման արտահայտութիւններ կատարելով ինձի դեմ:

Ան զիս կոչած է «անհիմն գրպարտիչ», «մութ նախապաշարուններու տեր անձ», «կամայական ենթադրութիւններ կատարող» և «սուտ գրպարտիչ»...

Այսպէս ուրեմն, մենք ալ մեր կարգին պիտի ստիպվինք մեր «անհիմն և սուտ գրպարտիչ» անվանող այս թշվառականին իսկական դիմագիծը ցույց տալ՝ անգամ մը ևս ապացուցանելէ ետք մեր գրածներուն ճշտութիւնը:

ՆԱՅԱՍԱԿՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

325 թվին, Նիկիո մեջ գումարվեցավ Քրիստոնեական Եկեղեցվո Առաջին Տիեզերական ժողովը: Այդ ժողովին մասնակցեցավ նաև Հայաստանյայց Ս. Եկեղեցին: Այդ ժողովին է, որ խմբագրվեցավ և բոլոր եկեղեցիներու կողմէ ընդունվեցավ «Հավատո Հանգանակը» (Հավատամք ի մի Աստված ի Հայրն Ամենակալ... և այլն):

Այդ թվականեն ի վեր համայն քրիստոնյա աշխարհը, մեր եկեղեցին ճանչցավ «Հայաստանյայց Եկեղեցի» անունով: Հար և նման «Հռովմեական Եկեղեցի» և «Հույն Եկեղեցի» անուններով ճանչցված եկեղեցիներուն:

Մեր առաջին պատմիչն ու մեր անմահ պատմահայրը՝ Մովսես Խորենացի, իր պատմութեան մեջ հստակորեն կը հիշէ «Հայաստանյայց Եկեղեցի» կոչումը՝ որպէս հատուկ անունը մեր եկեղեցվո:

Մեր ժամագրքի հեղինակ հայրապետներ՝ Գյուտ Հայրա-

պետ և Հովհաննես Մանդակունի, «Հայաստանյայց Եկեղեցի» անունն է, որ կը հիշատակեն որպես հատուկ անունը մեր եկեղեցվո:

Ս. Ներսես Շնորհալին, սկսյալ մինչև Ս. Գրիգոր Տաթևացի, Ստեփանոս Օրբելյան և այլ պատմիչներ, նույնպես «Հայաստանյայց Եկեղեցի» անունով է, որ կանվանեն մեր եկեղեցին:

Պատմական այս վկայությունները անուրանալիորեն կը հաստատեն, որ «Հայաստանյայց» անունը հատուկ անունն է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո:

«Առաքելական» անունը վարդապետական անունն է մեր եկեղեցվո, ինչպես «կաթողիկ» (կաթողիկե) անունը՝ Հռոմ-մեական Եկեղեցվո և «Օրթոդոքս» անունը՝ Հույն Եկեղեցվո (Ռիդղափառ):

Մեր եկեղեցվո մեծագույն տեսաբանը՝ Օրմանյան Պատրիարքը, որ անուրանալի հեղինակություն մըն է հայ և միջազգային եկեղեցական պատմությանց մեջ, իր «Հայոց Եկեղեցին» գրքին մեջ, հստակորեն կը գրե, որ «Հայաստանյայց Եկեղեցի», «Հայ Եկեղեցի» և «Հայոց Եկեղեցի» անունները հաստատված անուններն են մեր եկեղեցվո:

Կը հետևի ուրեմն, որ ոչ մեկ այլ հարանվանություն իրավունք ունի այդ անուններով ճանչցվելու:

Նույնիսկ քրիստոնեական միջազգային շրջանակներե ներս ալ *Armenian Church* կամ *Eglise Armenien* անունները ճանչցված են որպես անունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո (*name of Armenian Apostolic Church*):

Մեզի համար անհավատալի կը թվի, որ Հայ Ավետարանական հոգևորականներ չգիտնան այս տարրական ճշմարտությունը:

Ամեն հարանվանական եկեղեցի իր ճշգրիտ անունով է, որ ճանչցվի ու կը հարգվի: Ինչպես օրինակ «Հայաստանյայց, Հայ կամ Հայոց Եկեղեցի», «Հայ Կաթողիկե Եկեղեցի» և «Հայ

Ավետարանական Եկեղեցի»: Շուրջ 150 տարիներ է ի վեր այս անունով է, որ ճանչված է «Հայ Ավետարանական Եկեղեցին»: Ի՞նչ է պատճառը, որ հանկարծ կուզեն փոխել իրենց անունը և Հայ Եկեղեցվո անունով ներկայանալ ժողովուրդին:

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ՆԱՐԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԸՆ Է

Գրած էինք, որ Բողոքականությունը (Ավետարանաչափականություն) շուրջ 150 տարի առաջ ծագում առավ մեր մեջ, օտար միսիոնարներու ձեռքով:

Պատմականորեն վավերական այս ճշմարտության դեմ Հ. Լուսարարյան կը գրե. «Թորգոմ Փոստաճյան կը հանդգնի Հայ Ավետարանական Եկեղեցին օտարամուտ հարանվանություն մը կոչել»:

Ընդունելով հանդերձ մեր «հանդուգն» ըլլալը, կարևորությունը կուզենք հիշեցնել Լուսարարյան կոչեցյալին, որ ճշմարտություն մը ներկայացնելը, հանդգնություն չի կարոտիր, այլ ուղղամտության, ուրմէ գլխովին զուրկ է ինք:

Խոսինք պատմական ապացույցներով:

Բողոքական հարանվանությունը սկիզբ առավ Եվրոպայի մեջ 16-րդ դարու սկիզբը, Լութերի և Կալվինի ջանքերով՝ ընդդեմ Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցվո: Այս հարանվանությունը շուտով տարածվեցավ եվրոպական շարք մը երկիրներու մեջ: Բողոքականությունը հետագային շատ ավելի ընդարձակ հող գտավ Ամերիկայի մեջ:

Ամերիկա դարձավ կեդրոնը բողոքականության և միսիոնարության:

1830 թվականին ամերիկացի բողոքականներ միսիոնարներ նախ եկան Պաղեստին, հետո՝ Պոլիս:

1831-1832 տարիներուն ամերիկացի բողոքական միսիո-

նարներ՝ էմիլ Սմիթ, Կուտել և Տվայտ կուգան և կը հաստատվին Պոլիս:

Այս միսիոնարները առաջին հերթին կը հաջողին երեք հայեր բողոքական դարձնել՝ անոնց ընծայելով նյութական օժանդակութիւն:

Ամերիկացի բողոքական միսիոնարներու կատարած նյութական օժանդակութիւններէն հրապուրված, շատ մը չքավոր հայեր կը հառին բողոքականութեան: Անոնք կը հաջողին դավանափոխ դարձնել նաև Վրթանես Չրթլյան անուն հայ քահանա մը: 1834-ին վերոհիշյալ միսիոնարները Պոլսո մեջ կը բանան առաջին բողոքական հայ վարժարանը և կընծայեն ձրի ուսում: Դարձյալ շատ մը չքավոր հայեր, որոնք իրենց երեսնաներուն ուսման համար ուսումնաթոշակ վճարելու հնարավորութիւն չունէին, իրենց երեսնաները կը զրկեն այդ բողոքական վարժարանը:

Ամերիկացի բողոքական միսիոնարներու ընծայած նյութական և կրթական նպաստներու հետեանքով շուրջ տասնյակ մը տարիներու ընթացքին դավանափոխ դարձած բողոքական հայերու թիվը կը հասնի մոտավորապէս 8000-ի:

1844-1846 տարիներու ընթացքին, Պոլսո հայոց նորընտիր Պատրիարք Մատթեոս Ս. Արք. Չուխաճյան, տեսնելով ամերիկացի բողոքական միսիոնարներու կատարած դավանափոխական սանձարձակ գործունեութիւնը, ինք ևս միջոցներ ձեռք կառնե պաշտպանելու իր հօտը: Դավանափոխներէն շատեր, որոնք միամտորէն ընդունէր էին բողոքականութիւնը, կը վերադառնան իրենց մայր եկեղեցիով գիրկը: Հայոց Սրբազան Պատրիարքը ինք ևս միջոցներ ձեռք կառնե հասնելու չքավոր աղքատ հայերու օգնութեան: Շարք մը պատրաստված հոգևորականներ, գլխավորութեամբ Պրուսացի Հովհաննես Տերոյենց կրոնագետի, կը լծվին պաշտպանողական գործունեութեան՝ ընդդէմ բողոքական միսիոնարներու:

Հետևանքը կըլլա այն, որ շուրջ 8000 բողոքականացած հայերեն 7100-ը կը վերադառնան իրենց մայրենի եկեղեցվո գիրկը:

ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԱԾ ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Մատթեոս Սրբազան Պատրիարքի կատարած աշխատաքներեն շատ դժգոհ կը մնան միսիոնարներ և մի քանի բողոքականացած հայեր: Այս դժգոհներեն Հովհաննես Չրթլյան իր համախոհներվ կուգա Հայոց Պատրիարքարան: Անոնք Պատրիարք Սրբազանի և Պատրիարքարանի անձնակազմին առջև առանց ամչնալու Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խաչը «Ատաղձավաճառի ապրանք» կանվանեն: Ս. Մարիամ Աստվածածինը «լկիտի կին» կը կոչեն: Կանարգեն Հայոց Եկեղեցվո Սրբազան Պատարագը, նաև մեր Մկրտույթյան և Դրոշմի խորհուրդները:

Հայ բողոքականներու կատարած այս սրբապիղծ արարքը շատ կը զայրացնե Հայոց Մատթեոս Սրբազան Պատրիարքը, որ պատրիարքական կոնդակով մը կը բանադրե Վրթանես Չրթլյանը:

Բանադրանքի այս կոնդակը կը կարդացվի բոլոր հայ եկեղեցիներու մեջ:

Ամերիկացի միսիոնարներ և բողոքականացած հայեր Պոլսո մեջ իրենց ունեցած դժվարութեանց առջև միշտ ալ դիմած են Ամերիկայեն, Անգլիական և Գերմանական հյուպատոսներուն և օժանդակութիւն հայցել փորձած անոնցմե: Այս վերջինները, քաղաքական հեռանկարներով, հաճախ նեցուկ կեցած են բողոքական միսիոնարներու և բողոքական դարձած հայերուն:

Այս հյուպատոսարանները Հայոց Մատթեոս Պատրիարքին դեմ բողոք կը ներկայացնեն Թուրքիո կրօնից նախարար Ռեշիդ Բեյին:

Կրոնից թուրք նախարարը, երբ Հայոց Պատրիարքին կը ներկայանա և կիմանա հայ բողոքականներու կատարած սրբապիղծ արտահայտութիւնները Քրիստոսի խաչին և Սուրբ Մարիամ Աստվածածնի դեմ, ինք ևս, որպէս իսլամ, կը զայանա կատարված այդ անօրինութեան դեմ, որովհետև իսլամներու Ղուրանին մեջ Մոհամմեդ Քրիստոսը կընդունի որպէս մեծ Մարգարե և հարգանքով կարտահայտվի Ս. Մարիամի մասին:

Կրոնից նախարար Ռեշիդ կը թելադրե Հայոց Պատրիարքին, որ նամակ մը գրե Անգլիո դեսպան՝ Լորդ Քոուլեյի և նամակին մեջ նկարագրե հայ բողոքականներու կատարած սրբապիղծ արարքը:

Թելադրանքը կը կատարվի: Անգլիո դեսպանատան Եպիսկոպոսը՝ Ուլրատիոս Սաուզետ, նորակազմ հայ բողոքականներու (Ավետարանական) մասին կը պատրաստե հուշագիր մը, ուր ի միջի այլոց կը գրե հետևյալը. «Բողոքականաց հետևողք խառնուրդ իմն անհաստատութեան և արմատական աղանդոց են, և խանգարիչ՝ կանոնաց եկեղեցվո և ամենայն սկզբնական ճշմարտութեան»: Թարգմանենք աշխարհաբարի. «Բողոքականներու հետևողները անհաստատ և արմատական աղանդներու խառնուրդ մըն են, նաև եկեղեցվո կանոններու և ամեն սկզբնական ճշմարտութեան՝ խանգարիչներ»:

«ԲՐՈՒԵՍՔԱՆ ՄԻԼԼԵՌԻ»

Թուրք իշխանութիւններ, անսալով Ամերիկայի և մյուս Հյուսիսատոմներու թելադրութեանց և տրված ըլլալով կառավարական հրամանագրով, արդեն իսկ հաստատված էր Հայ Կաթոլիկ համայնքի մը կազմութիւնը «Կաթոլիկ Միլլեթի» անունով, նաև նոր հրամանագրով մը կը հաստատեն Հայ Բողոքական (Ավետարանական) համայնքի մը կազմութիւնը՝

1847 թվի Հոկտեմբեր 3-ին՝ «Բրոթեսթան Միլլեթի» անվան տակ: Նորակազմ Հայ Բողոքական համայնքի «վեզլի» կը նշանակվի Ստեփան Սերոբյան:

Այս թշվառականեն շուրջ տարի մը առաջ՝ 1946-ի Հուլիսին բացված էր արդեն Հայ Բողոքական (Ավետարանական) առաջին ժողովարանը Պոլսո մեջ՝ Աբխոզոմ Յուլթյուճյանի հովանավորութեամբ:

«Հայ Ավետարանական» և «Հայ Բողոքական» անուններեն գատ Վեր. Վ. Թուրիկյան իր «Ավետարանական Եկեղեցվո 150-ամյակը» գրքին մեջ հիշատակութուն կը կատարե նաև «Հայաստանյայց Ավետարանական» անունի գործածութեան առաջարկի մը շուրջ, որ հիմնավորված է, ոչ ալ՝ գործածված: Շուրջ 910 անդամներ ունեցող սկզբնական այս համայնքեն ներս, կային հինգ տարբեր բաժանումներ՝ «Ավետարանականներ», «Լութերականներ», «Երիցականներ», «Մկրտչականներ» և «Շաբաթապահներ»: Այս անուններեն տիրական դարձած և պահպանվածը եղեր է «Հայ Ավետարանական» անունը, որ շարունակված է մնալ անփոփոխ ավելի քան հարյուր հիսուն տարի: Շուրջ հիսուն տարի առաջ Պատվելի Ա. Ա Պետիկյան, միութենական նպատակներով առաջարկած է «Հայաստանյայց» անունի գործածութունը, որ ընթացք գտած է: Այժմ Հայ Ավետարանական հոգևորականներու մեջ նոր մարմաջ մը ծագում առած է «Հայ Եկեղեցի» և «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի» անուններով ճանչցվելու: Անհրաժ և անտեղի մարմաջ:

Հայ Ավետարանական (Բողոքական) եկեղեցվո սկզբնական ծագման և կազմավորման պատմական այս իրադարձութունները, ինքնին կը հաստատեն բողոքական հարանվանութեան օտար հարանվանութուն մը ըլլալը: Կը հաստատեն նաև օտար միսիոնարների ձեռքով մեր մեջ ծագում առած ըլլալը:

Լուսարարյան կը հայտարարե, որ իբրև թե Պոլսո մեջ «կրոնական զարթոնք» մը կար 19-րդ դարու կեսերուն, և այդ

«զարթոնքը պատրաստ հող ստեղծեր էր» և «ամերիկացի մի-սիոնարներ այդ հողին վրա պարզապես աշխատեցին»: Հոս՝ ըսել ուզվածը այն է, որ իբրև թե այդ «հող» կոչվածը հայ բողոքականութունն է եղեր:

Այս ստահող արտահայտությունը՝ ճշմարտությունը ուրանալու ապիկար փորձ մըն է դարձել:

ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՏԱՐՁԱԿՈՒՄ

Մեր գրած հոդվածին կապակցությունը զիս քննադատողներ, շարունակ անձնական ներկա հանգամանքս թիրախ կը դարձնեն՝ իրենց հարձակումը արդարացի ցույց տալու պատրվակով: Անոնք հոգևորական ասպարեզե հեռացած ըլլալս ցույց կուտան որպես փաստ. որ ես սխալ եմ, իսկ իրենք՝ ճիշտ:

Իրենց այս արարքը ինձի կը հիշեցնե մեր մեծանուն երգի-ծաբան Հակոբ Պարոնյանի կարճ մեկ էջը: Ան մոտավորապես կը գրե հետևյալը. «...Մեր լրագրական վեճերու ընթացքին, գրողներ շատ անգամ հեռանալով իրենց նյութեն, մեջտեղ կը նետեն, դիմացինին անձնական մեկ վիճակը կամ պարագան, որպես փաստ՝ արդարացի ցույց տալու համար իրենց կողմը. իսկ հանցավոր՝ դիմացինը...: Օրինակ, եթե վեճը կեսարացիի մը հետ է, պարզապես ըսե իրեն հետևյալը. - Բարեկամ, տրված ըլլալով, որ կեսարիայեն պատվական ապուխտ կելլե... և տրված ըլլալով, որ ժամանակին կեսարացի մը էջ մը ներկեր է, հետևաբար իրավունքը իմս է...»:

Այս օրինակը շատ կը պատշաճի իմ անձնական հանգամանքս խժբժել ուզող և մեր վեճին նյութը տարբեր ոլորտներ տանիլ ուզող թշվառականներուն:

Ճիշտ այս է, որ կը կատարե Հ. Լուսարարյան, որ դեռ՝ «մտավորական պարկեշտությունս» կասկածելի ցույց տալե

ետք, նաև իբրև օրինակելի նմուշ իր անձնական կյանքը կը ներկայացնե մեզի...: Ան պարծենկոտությունամբ կը գրե, որ ինք «Հայաստանյայց եկեղեցվո մեջ ծնած ու մեծցած ըլլալով հանդերձ, լքեր է Հայաստանյայց եկեղեցին և դարձեր է Ավետարանական»:

Արդ՝ հարկ է գիտենալ, թե այս արարքը ի՞նչ կապացուցանե: Ասիկա փա՞ստ է, որ Հայաստանյայց եկեղեցվո անունները Հայ Ավետարանականները ևս գործածելու իրավունք ունին: Ասիկա փա՞ստ է, որ Բողոքական (Ավետարանական) հարանվանությունը հայերու մեջ օտար միսիոնարներու ձեռքով սկսած է: Ասիկա փա՞ստ է, որ ան իր «հոգին աճուրդի հանած է», ինչպես կը սոնքա ըսել: Անշուշտ ո՛չ:

Եվ սակայն ասիկա փա՞ստ է՝ Լուսարարյանի հեղհեղուկ նկարագիրը հատկանշող: Պիտի չզարմանանք, եթե ան օր մը, ավելի շլացուցիչ դիրքե մը հրապուրվելով, իսլամություն հառի: Նման նկարագիրներե ամեն ինչ կարելի է սպասել:

Մեր հոս ներկայացուցած պատմական և վավերական վկայությունները կը հերքեն մեծ մասամբ Լուսարարյանի հերյուրանքները, մասամբ նաև՝ Վեր. Տարագճյանի անճիշտ վերագրումները:

Հետագային լայնորեն պիտի անդրադառնանք այս վերջինին կատարած պատմական խեղաթյուրումներուն և ներկայացուցած ավելորդաբանություններուն: Այո՛, կարևոր ըսելիքներ ունինք դեռ:

«ՆՐԱՎԵՐ ԾՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ»

Զարմանալի զուգադիպությունամբ մեր ձեռքը անցավ «Նոր օր» եռօրյայի հին թիվ մը՝ Օգոստոս 7, 1993: Այս թվին մեջ, «Հայոց եկեղեցվո Առաքելությունը» խորագրով հոդված մը գրած է պրոֆ. դոկտ. Հակոբ Ներսոյան:

Հողվածը գրված է Վեր. Վ. Թուլթիկյանի նույն խորագրով, նույն ժամանակներուն գրած մեկ հողվածին դեմ, հրատարակված «Ասպարեզ»ի մեջ:

Արդարև, շուրջ յոթը տարիներ առաջ Վեր. Վ. Թուլթիկյան «Ասպարեզ» օրաթերթի մեջ հողված մը հրատարակած է, ուր ի միջի ա՛յլ արտահայտութեանց, գրած է նաև նույն բաները, որ գրած է վերջերս «Նոր Օր»ի մեջ:

Ահա նմուշ մը իր գրածներէն.

«Հայ Եկեղեցի» որակումը, մենաշնորհը չէ Մայր Եկեղեցիին, այլ «Հայ Եկեղեցի» ըսելով պետք է հասկանանք նաև «Հայ Կաթողիկէ» և «Հայ Ավետարանական» Եկեղեցիները:

Կը թվի, որ Վեր. Վ. Թուլթիկյան անտեղիտալի մարմաջ մը ունի Հայ Եկեղեցւո ՄԵՆԱՇՆՈՐՀները յուրացնելու: Ո՞ր այդ յուրացումը ան կողմն ընել հօգուտ ոչ թե լոկ «Հայ Ավետարանական», այլ և հօգուտ «Հայ Կաթողիկէ» եկեղեցիներու:

Եվ սակայն, դուկտ. Հակոբ Ներսոյան, անառարկելի փաստերով կապացուցանե, որ Վեր. Թուլթիկյան չարաչար կը սխալի, ան կը հաստատե ճիշտը սա բառերով.

«Հայ Եկեղեցի» որակումը, իր բովանդակ իմաստով մենաշնորհն է Հայաստանյայց Մայր Եկեղեցւո»:

Դուկտ. Հակոբ Ներսոյան՝ այսպես հերքելէ ետք Վեր. Թուլթիկյանի մեկ քանի անճիշտ մեկնաբանութիւնները, սակայն գովեստով կարտահայտվի անոր ներկայացուցած շարք մը այլ տեսակետներու մասին:

Ան հատկապես կը գնահատե Վեր. Վ. Թուլթիկյանի ցուցաբերած որդիական վերաբերմունքը Հայաստանյայց Եկեղեցւո հանդեպ եզրակացուցիչ սա բառերով.

«...Անշտապ կը սպասենք այն օրվան, երբ Մայր Եկեղեցին պիտի ըլլա իրավ մայրը իր այն բոլոր զավակներուն, որ այժմ իրմե բաժանված կը բնակին նվիրապետական ուրիշ երգիկներու ներքե»:

Մեր նախորդ հոդվածին մեջ գրած «Հրավեր ճշմարտութ-
յան» արտահայտությունը կատարած էինք քաջալերված՝ Վեր-
թուփիկյանի շատ ավելի կարևոր մեկ այլ արտահայտութենեն,
որ ահավասիկ...

Վեր. Վ. Թուփիկյան, իր «Հայ Ավետարանական Եկեղեցվո
150-ամյակը» գրքին մեջ գրած է հետևյալը.

«Որդի» Հայ Ավետարարանական Եկեղեցին, միշտ պատ-
րաստ է իր «Մայրը» եղող Հայ Առաքելական Եկեղեցվո հետ
ջերմ կապեր հաստատել և զանոնք ամրապնդել, և եթե Աս-
տուծո կամքն է՝ Ս. Հոգիի առաջնորդությունմբ օր մը վերա-
դառնալ Մայր Եկեղեցիին»: Գիրկը՝ անշուշտ:

Կարելի՞ Բան է, որ «Աստուծո կամքը» հակառակ ըլլա,
նման Աստվածահաճո միություն մը: Անշուշտ՝ ո՛չ:

Սրտովին կուզենք հավատալ Վեր. Թուփիկյանի վերոհիշ-
յալ արտահայտության անկեղծության:

Եվ սակայն պատճառներ ունինք կարծելու, որ Հայ Ավե-
տարանան շրջանակեն ներս կան խստադեմ, խոփոռ դեմքեր,
որոնց համար այնքան ալ ցանկալի է նման միություն մը:
Երանի սխալած ըլլանք:

Հարց տանք.

Կրնա՞ ըլլալ ավելի լավ առիթ, քան՝ Հայաստանյայց Եկե-
ղեցվո 1700-ամյակը, որ բաժանյալ «Որդի» Հայ Ավետարա-
նական Եկեղեցին միանա իր «Մայրը» եղող Հայաստանյայց
Առաքելական Ս. Եկեղեցիին:

-Ձի կրնար ըլլալ:

Է

ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆԱԲԱՐՈՂՆԵՐ
(ՀԱԿՈՒԲ ԼՈՒՍԱՐԱՐՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ
ՊԱՐԳԵՎ ՏԱՐԱԳԾՅԱՆ)

Բ.

Մեր գրած «Հայաստանյայց Եկեղեցվո Անուաները Աճուրդի Հանված Հեն» հոդվածին ի պատասխան՝ երկարապատում հոդված մըն ալ գրած է Վեր. Պարգև Տարագճյանը «Նոր Կյանք» շաբաթաթերթի Մարտ 15-ի թիվին մեջ:

Մեզի անծանոթ անձ մըն է այս Վերապատվելին և դատելով իր գիրեն, ան կթվի ըլլալ հասուն տարիքի մեջ՝ իր Ավետարանական հարանվանության ջերմորեն նվիրված անձ մը:

Իր գրած հոդվածը, թեև կը թվի գերծ ըլլալ կիրքե, և սակայն իր մեջ կը պարունակե շարք մը նախատական և ծաղրական ակնարկություններ, որոնք խոտոր կը համեմատին իր բռնած պաշտոնին և կրոնական հանգամանքին:

Գալով իր հոդվածի պարունակության՝ ցավով ստիպված ենք հաստատելու, որ հոն կը վխտան պատմական անճշտություններ, հերյուրածո վկայություններ, անհիմն դատումներ և անկապակից արտահայտություններ, որոնցմե կարևորներուն մասին ստիպված ենք անդրադառնալու:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր նախորդող հոդվածին մեջ ապացուցած էինք, որ Դ. դարու սկիզբեն ի վեր, «Հայաստանյայց Եկեղեցի» անուանով

ճանչցված էր արդեն մեր եկեղեցին, համայն քրիստոնյա աշխարհի կողմն: Եվ սակայն Վեր. Տարագճյան գիտե նշանակությունը «երբեք» բառին: Եթե գիտե, կնշանակե, որ անգիտակցորեն կը խեղաթյուրե պատմությունը:

Մեզի այնպես կը թվի, որ ան չի գիտեր թե ինչ կը գրե, որովհետև իր այս անճիշտ արտահայտություն համար վկայություն կը կանչե «Հայ մեծանուն Օրմանյան Պատրիարքը» (իր բառերն են ասոնք): Վեր. Տարագճյան չանդրադառնար, որ Օրմանյան Պատրիարք ամբողջապես կը հերքե իր վերոհիշյալ հայտարարությունը:

Օրմանյան Սրբազան իր «Հայոց Եկեղեցին» գրքին մեջ որոշապես կը գրե, որ «Հայաստանյայց», «Հայ» և «Հայոց Եկեղեցի» անունները կամ մակդիրները կը պատկանին միմիայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Վեր. Տարագճյան իր հոգվածին մեջ առանց անդրադառնալու կը հիշատակե նաև անունը մեր պատմահայր Մովսես Խորենացիի, որ իր պատմության գրքին մեջ որոշապես կը հիշատակե «Հայաստանյայց Եկեղեցի» անունը՝ որպես հատուկ անունը մեր եկեղեցվո:

Հարց տանք Վեր. Տարագճյանին. Պատմահայր Մովսես Խորենացին՝ «վաղեմի սրբազան հեղինակ» չէ՞ և չէ՞ նկատեր ան, որ իր իսկ ձեռքով կը հերքե իր կատարած պատմական անճիշտ վկայությունը:

Ան նաև կը կատարե այլ գարմանալի հայտարարություն մը: Կը գրե. «Մենք առանց վարանումի և մեծ ուրախություն «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի» կրնանք կոչել Մայր Եկեղեցվո անունը»:

Այս նախադասության երկրորդ մասին անճիշտ և անվավեր ըլլալը հաստատեցինք արդեն, իսկ առաջին մասը՝ ծիծաղելի է պարզապես:

Հարց տանք Վերապատվելիին ամենայն հարգանքով, որ ո՞վ է ինք: Ի՞նչ հանգամանք ունի ինք, որ պիտի իրավունք

տա եղեր «Հայաստանյայց Եկեղեցի» անունին՝ Հայաստանյայց Եկեղեցվո պատկանելիության:

Ինք որ միայն 150 տարվան գոյություն ունեցող օտարամուտ հարանվանության մը մեկ հոգևորականն է, ի՞նչպես կը ժպրհի 1700 տարիներու պատմական փառահեղ անցյալ ունեցող Հայաստանյայց Եկեղեցվո իրավասությունները ճշտելու:

Վեր. Տարագճյան իր այս արտահայտությամբ ցույց կու տա ինքնահավանություն մը, որ համազոր է գոռոզության. ընթացք մը, որ անհարիր է հոգևորականի իր պաշտոնին:

ԱՅԼ ԱՆՃԻՇՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեր. Տարագճյան հակում մը ունի կատարելու անչիչտ վկայություններ, ուր բացակա է լրջությունը:

Ահա այսպես. իր այս հողվածին մեջ, ան կատարած է սատեսակ անպատասխանատու հայտարարություն մը.

«Թաղեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի մեջ կատարած առաքինությունը պատմական հիմք չունի»:

Նման հայտարարություն կատարող որևէ անձ՝ պարտավոր է պատմական փաստացի տվյալներով հաստատելու իր ըսածը: Վեր. Տարագճյան չըներ այս, որովհետև չունի ոչ մեկ փաստ՝ հաստատելու իր այս հերյուրանքը:

Մեր եկեղեցվո պատմությունը նենգափոխելու այս արարքը, փորձ մըն է նսեմացրելու Հայաստանյայց Եկեղեցվո կարևոր մեկ արժանիքը, որ իր Առաքելականությունն է: Ապրիկար և ապարդյուն փորձ: Խոսինք փաստերով:

Թաղեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի մեջ կատարած Առաքելական գործունեություն մասին առաջին վկայությունը կուտա Եվսեբիոս Կեսարացի հույն պատմիչը, որ ապրած է Գ. դարու կեսերուն և եղած է Քրիստոնեություն Առաջին պատմիչը:

Թաղեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի մեջ կատարած քրիստոնեության քարոզչության մասին կը վկայե նաև մեր պատմահայր՝ Մովսես Խորենացին, որ Թաղեոս Առաքյալի մասին կը կատարե հատկանշական արտահայտություն մը՝ գինք կը նկատե «Նախահայր՝ Սրբոյն Գրիգորի Մերոյ Լուսաւորչին»:

Շարք մը այլ հայ պատմիչներ ևս կը կատարեն նույն վկայութիւնը, ինչպէս Փավստոս Բյուզանդ, Գրիգոր Տաթևացի, Ստ. Օրբելյան և այլն:

Մեր եկեղեցւո Տոնացույցին մեջ ևս, այս զույգ Առաքյալներուն մասին հիշատակութիւն կատարած է հատեյալ հատկանիշներով. «Առաջին լուսավորչաց մերոց՝ Սրբոցն Թաղեոսի և Բարդուղիմեոսի Առաքելոցն»:

Լատին պատմիչ Labbé Patin ևս կը հաստատե Թաղեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի մեջ կատարած քարոզչութիւնը:

Քրիստոնյա համայն աշխարհը Հռովմեական, Կաթոլիկ, Հույն Օրթոդոքս, Ռուս, Ասորի, Ղպտի եկեղեցիներ, համրորեն կընդունին Թաղեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանյայց եկեղեցւո Առաքյալներ եղած ըլլալը:

Օրմանյան Սրբազան, իր «Հայոց եկեղեցին» գրքին մեջ անհերքելի փաստերով կապացուցանե այս զույգ Առաքյալներու գերեզմաններն ու անոնց վրա կառուցված վանքերը մինչև այսօր կը մնան կանգուն պատմական Հայաստանի մեջ:

Ս. Թաղեոս Առաքյալի վերոհիշյալ վանքը կը գտնվի հյուսիս արևմտյան Պարսկաստանի մեջ, որ պատմական Հայաստանի մեկ մասն էր ատենին:

Ամեն տարի հազարավոր հայեր ուխտի կերթան հոն՝ Սուրբի տոնին:

Հոս հիշված ապացույցներեն մեկ հատն իսկ բավ է հերքելու Վեր. Տարագճյանի կատարած վերոհիշյալ ստահող հեր-

յուրանքը, բայց մենք կուզենք հիշել հոս այլ կարևոր ապացույց մը ևս, որ կը կոչվի «Ազգային Ավանդություն»:

Ամեն ազգ և բոլոր հին եկեղեցիները ունին իրենց ազգային ավանդույթյունները, որոնց վավերականությունն ու անոնցմով ավանդված ճշմարտությունները նույնքան անուրանալի են, որքան պատմիչներու կողմէ փոխանցված վկայությունները:

Այդ կարևոր և վավերական ավանդույթյուններէն հոս հիշենք երկուքը:

Ս. Գեղարդի Ավանդությունը... Հայաստանյայց Եկեղեցվո ավանդույթյանց համաձայն Ս. Թադեոս Առաքյալ իր հետ Հայաստան բերավ Ս. Գեղարդը:

Գեղարդը այն նիզակն է, որ Քրիստոսի խաչելութեան ատեն պահակ զինվորը խրեց Տիրոջ՝ Հիսուսի կողը ստուգելու համար Անոր մահացած ըլլալը:

Հետագային այդ գեղարդը դարձավ սրբազան մասունք և անցավ Թադեոս Առաքյալի ձեռքը:

Թադեոս Առաքյալ իր հետ Հայաստան բերավ զայն և, որպէս սրբազան մասունք, դարեր շարունակ պահված մնաց Հայաստանի մեջ:

Հայաստանի մեջ կա պատմական վանք մը, որ կը կոչվի Գեղարդավանք: Այս վանքին մեջ է, որ պահված կը մնար այդ Ս. Գեղարդը, երկար դարեր և վանքն ալ կոչվեցավ Գեղարդավանք:

Այս վանքն ունի աննման և անստեղծ եկեղեցի մը: Եկեղեցի մը, որ փորված և քանդակված է բլուրի մեծութեամբ հսկա ապառաժի մը մեջ և հայկական ոճով: Քրիստոնյա աշխարհի մեջ չկա նման հրաշակերտ սրբարան մը: Հուշարձան սրբատեղի մը, որ Հայաստանյայց Եկեղեցվո փառքերէն մին կրնա համարվիլ:

Ս. Գեղարդի մասին կա նաև հրաշալի դրվագ մը: 1847 թվին Թիֆլիսի մեջ հնդախտի (cholera) համաճարակ սկսած էր:

Ամեն օր այս ախտեն վարակված հարյուրավոր անձեր կը մահանային:

Քաղաքի բնակիչները խնդրանք կը ներկայացնեն Հայոց Ներսես Աշտարակեցի վեհափառ կաթողիկոսին, որպեսզի ան Թիֆլիս գա և Ս. Գեղարդով Անդաստանի արարողություն մը կատարե քաղաքին վրա, որպեսզի հնդախտի համաճարակը կանգ առնե:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը կընդունի խնդրանքը, Թիֆլիս կը հասնի Ս. Գեղարդով և քաղաքին չորս կողմը կօրհնե Ս. Գեղարդով՝ Անդաստանի արարողությամբ: Բյուրավոր բնակիչներ՝ հայ, վրացի, ռուս և իսլամ կը հետևին Վեհափառի կատարած օրհնասացության և թափորին:

Ս. Գեղարդով կատարված օրհնությունը կը կատարե իր հրաշափառ դերը: Հնդախտի համաճարակը կանգ կառնե:

Այդ թվականեն ետք, Ս. Գեղարդը ի պահ կը մնա Ս. էջմիածնի թանգարանին մեջ:

Ս. Մյուռոնի Ավանդությունը. – Ս. Թադեոս Առաքյալի ձեռքով Հայաստան բերված է նաև սրվակ մը անուշաբույր յուղ, որ իրեն տրված էր Քրիստոսի կողմե:

Հայաստանի քրիստոնյա հավատացյալներ իրենց կարգին ծաղիկներե հավաքված անուշաբույր յուղեր կը բերեն և կը խառնեն Առաքյալին բերած անուշաբույր յուղին հետ:

Այսպես շարահարաբար նորը հնին հետ խառնվելով, Թադեոս Առաքյալի Հայաստան բերած սրվակ մը անուշաբույր յուղն է, որ հասած է մեր օրերուն և որ Հայաստանյայց Եկեղեցվո Սրբալույս Մեռոնն է:

Այս Սրբալույս Մեռոնով է, որ ետ մկրտության՝ Դրոշմի խորհուրդով կը կնքվին մեր երեխաները: Կօծվին մեր եկեղեցականները՝ քահանաներեն մինչև կաթողիկոսները:

Թող ներվի, որ դուրս ելլելով մեր վեճեն, լայն շեղում մը ըրինք և մեր ընթերցողներուն ներկայացուցինք Հայաստան-

յայց Եկեղեցվո պատկանող մեկ քանի «մենաշնորհները» (հոս կը գործածենք Վեր. Թուժիկյան նախասիրած բառը), որոնք սերտորեն կապված են Հայաստանյայց Եկեղեցվո Առաքելականության (Առաքյալներու ձեռքով հիմնված) հետ:

ԱՅԼ ՆԵՐՅՈՒՐԱՆՔՆԵՐ

Վեր. Տարագճյան կը գրե, որ ես տեղյակ չեմ եղեր, որ 19-րդ դարու կեսերուն «Հայոց Եկեղեցիի բարեկարգութեան» հարց մը ծագում առած է կովկասահայ մեր շարք մը փայլուն մտավորականներուն կողմէ, ինչպէս՝ Խաչատուր Աբովյան, Ս. Նազարյան, Մ. Թաղիադեանց և Գրիգոր Արծրունի, որոնք Հայաստանյայց Եկեղեցիէն ներս Reform (բարեկարգութիւն) պահանջեր են եղեր որպէս բողոքականներ:

Այսպիսի կարևոր հայտարարութիւն կատարող որեւէ անձ պարտավոր է տալու աղբյուրը իր վկայութեան:

Վեր. Տարագճյան կրնա՞ էջ մը գիր ցույց տալ վերոհիշյալ գրողներէն, որոնք դեմ արտահայտված ըլլան Հայաստանեայց Եկեղեցվո դավանութեանց, եկեղեցական կանոններուն, ծեսերուն, Ս. Մյուռոնի գործածութեան, սրբոց տոնակատարութեանց, մոմավառութեան և այլ եկեղեցական խորհուրդներու գործադրութեանց:

Վերապատվելին կրնա՞ ապացուցանել, որ վերոհիշյալ գրողներէն որեւէ մեկը պանծացուցած ըլլա բողոքական հարանվանութիւնը ընդդէմ Հայաստանյայց Եկեղեցվո դավանութեան: Անշուշտ ոչ, որովհետեւ ինքն է հեղինակը այս ստույգի:

Վերոհիշյալ անուններու շարքին մեջ կա նաև անունը, Արևելահայ գրականութեան պանծալի ռահվիրա և հայրենասիրութեան անզուգական տիպար Խաչատուր Աբովյանի, որ Հայաստանյայց Եկեղեցվո և Ս. էջմիածնի հարազատ և հավատարիմ զավակը եղած է: Իր անմահ երկերը վկա:

Վեր. Տրագճյանի հերթական հերյուրանքներեն մեկն է նաև հետևյալ խոսքը. «Հայաստանի մեջ քրիստոնեությունը տարածվեցավ Տրդատ թագավորի սուրով»: Ճշմարիտը այն է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը եղավ քրիստոնեությունը տարածողը, և ոչ թե Տրդատ թագավորը, և ոչ ալ՝ իր սուրը:

Վեր. Տարագճյան կը կատարե նաև այլ անճիշտ հայտարարություն մը: Կը գրե, որ «Արշակունի թագավորները արյունալի պայքար տարին Ս. Հուսիկ, Ս. Ներսես և Ս. Սահակ կաթողիկոսներու դեմ»:

Ճշմարտությունը այն է, որ, արդարև, արյունալի ընդհարում մը տեղի ունեցեր է ընդմեջ Տ. Հուսիկ կաթողիկոսի և ժամանակակից Տիրան արքայի միջև, և սակայն նման պայքարներ տեղի չեն ունեցած այլ թագավորներու և կաթողիկոսներու միջև:

Ընդհակառակը, ոչ թե պայքար, այլ շատ սիրալիք եղած են Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի և Վուստյանի արքայի հարբերությունները:

Մեր պատմիչները կը վկայեն, որ Վուստյանի թագավոր գորավիգ կեցած և հովանավորած է Ս. Մեսրոպ Մաշտոցի Գրերու Գյուտը և Ս. Սահակ հայրապետի հովանավորությունը կատարված Ս. Գրքի թարգմանությունը:

Վեր. Տարագճյան լայն փակագիծ մը բաված է, երթալու համար մինչև Համաշխարհային Բ Պատերազմ՝ ցույց տալու համար, որ Հիտլերի և Գերմանական Բողոքական Եկեղեցվո միջև սերտ գործածություն մը գոյություն ունեցեր է:

Ապա ան պանծացուցեր է մեր «Հին հեթանոս աստվածները՝ Արամազդը, Աստղիկը, Արտեմիսը և Վահագնը», և կարծես անուղղակիորեն անգոսնիչ ակնարկություն մըն ալ կատարած է՝ ընդդեմ «Հրեա Հիսուս»ին (Պատվելիին բառերն են ասոնք):

«ՊԵՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ»

Այս բոլոր անկապակից և անճիշտ վկայությունները կը կատարե Վեր. Տարագճյան՝ հստակ դարձնելու համար իր հետին միտքը, որ ան կարտահայտե սա բառերով.

«Էջմիածնի Եկեղեցին այս օրերս կը սիրաբանի պետության հետ և կուզե ճանչցվիլ որպես պետական եկեղեցի»:

Վերապատվելին գիտակցաբար կը չարափոխե ճշգրիտ անունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և իր ուրույն հորջորջումով կանվանե զայն «Էջմիածնի Եկեղեցի»:

Գալով իր վերոհիշյալ գրածին, այդ կարճ նախադասությունը հեռու է հայերեն ըլլալէ: Հոն կան նաև գաղափարի սխալներ և, ինչ որ ամենեն ընդվզեցուցիչն է, հոն կա զզվելի և ամոթալի վերագրում մը: Վեր. Տարագճյան, Քրիստոսի ձեռքով հիմնված մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կը դնե սիրաբանություն կատարողի դերին մեջ:

Այս անարգ վերագրումով, Վեր. Տարագճյան ոչ թե լոկ կանպատվե Հայ ժողովուրդի սրբություն սրբոց Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, այլ նաև կանպատվե Հայ ժողովուրդի արժանապատվությունը:

Հարց տանք իրեն. – Հոգևորականի մը (որպիսին է ինքը) կը վայելե՞ նման գուհիկ վերագրում մը կատարել, մեր ազգի ամենեն նվիրական սրբատեղիի հանդեպ: Անշուշտ ոչ:

Եվ սակայն այս վարկաբեկիչ վերագրումը կը կատարվի հատուկ դիտավորությամբ և միսինոնարական ծրագրված արշավի մը մտադրությամբ, որուն պիտի անդրադառնանք հետագային:

Պետական և այլ ազգային ավագանիներու հետ, եթե սիրաբանողներ կը փնտրե Վեր. Տարագճյան, թող փնտրտուքը կատարե ան Հայաստանի մեջ՝ «լիքը գրպաններով» ման եկող և «Ավետարանչություն» տարածել փորձող պատվելիներու և Ռընե Լևոնյաններու շրջանակեն ներս:

Վեր. Տարագճյանի ամբողջ մտատանջությունը կը կայանայ իրողության մեջ, որ «Հյաստանյայց Առաքելական Եկեղեցին» չըլլա թե «Պետական Եկեղեցի» հռչակվի:

Հիշեցնենք Վերապատվելիին, որ պետական եկեղեցի անվանումը սխալ անվանում մըն է:

«Ազգային Եկեղեցի» կոչումն է ճիշտը: Պարզ թող ըլլա Վեր. Տարագճյանին և բոլոր պատվելիներուն, որ ամենեն ասկածե և տարակույսե վեր է այն իրողությունը՝ որ Հյաստանյայց Առաքելական Ս. եկեղեցին եղած է միշտ, և միշտ ալ կը մնա որպես «Ազգային Եկեղեցի» Հյաստանի և Հայ ժողովուրդին:

1700 տարիներ առաջ ազգովին քրիստոնյա դարձանք ձեռամբ Ս. Գրիգոր Լուսավորչի: Ան եղավ Առաջին Կաթողիկոսը Հայ ժողովուրդին, Տրդատ Թագավորի և արքունի իշխանությանց կողմե Հյաստանյայց Եկեղեցին այդ թվականին դարձավ «Ազգային Եկեղեցի» Հայ ժողովուրդին:

Հյաստանյայց Եկեղեցվո «Ազգային Եկեղեցի» ըլլալու իրողությունը շարունակվեցավ և մնաց նաև Կիլիկյան շրջանի Թագավորության ժամանակաշրջանին:

Նույնիսկ Լևոն Զ. Թագավորի մահվանեն և Կիլիկյան Թագավորության անկումեն ետք ալ, Հյաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին եղավ և մնաց որպես «Ազգային Եկեղեցի» Հայ ժողովուրդին:

Եվ ապա՝ վեց դարերու գերութենեն ետք, 1918 թվին՝ Հայաստան կարճ ժամանակաշրջանով մը տիրացավ իր անկաժողովան, Հյաստանյայց Առաքելական Ս, Եկեղեցին, որ Հայ ժողովուրդի Ազգային Եկեղեցին էր, իր նշանակելի դերը կատարեց այդ անկախության կերտման մեջ:

Մեր Եկեղեցվո եռամեծար առաջնորդներեն մին՝ Գարեգին Արք. Հովսեփյանց (Հետագային Կաթողիկոս Հայոց Մեծի Տանն Կիլիկիո), խաչը ձեռքին որպես նոր օրերու Ղևոնդ Երեց մը, Հայ զինվորներու և մարտիկներու հետ կը մաքառեր Հայաս-

տանի պաշտօանության և կերտման համար:

Հոս պարտիմ հիշել այդ սրտառուչ դրվագ մը:

Սարգարապատի ասեղ ճակատամարտի ատեն, երբ հայ մարտիկներ օրհասական կռիվ կը մղեին ընդդէմ թշնամի հորդաններու, կուգա պահ մը լուրջ մտահոգության:

Կովի սահմանը շատ մոտ ըլլալուն Ս. Էջմիածնի, մարտնչող հերոսներեն մին՝ Դրո Կանայան, կը ներկայանա այն ատենվան Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Վեհափառին և կառաջարկե գինք փոխադրել Երևան:

Գևորգ Ե. Վեհափառ Կաթողիկոսը ցույց կուտա Դրո Կանայանին, Ս. Էջմիածնի բակին մեջ խաղացող մանուկներ և Մայր Տաճարի կողքին համախմբված տարեցներ, և բառ առ բառ կըսե իրեն հետևյալը.

– Տեսնո՞ւմ ես բակի միջի էս երեխաները, և Մայր Տաճարի կողքին մեր տարեցներին... Ես Աթոռից չեմ հեռանա: Ես, թե որ հարկ լինի, կը մեռնեմ հոս, բայց անտեր չեմ թողնի էս երեխեքը, էս տարեցները և մեր Ս. Աթոռը: Ես օրհնում եմ ձեզ բողոքիդ, գնացեք պաշտպանեք մեր սուրբ հողը: Աստված մեզ հետ է: Դուք պիտի հաղթեք թշնամուն:

Այս սրտազրավ դրվագը ինձի անձամբ պատմած է նույն ինքն՝ Բաշ Աբարանի հերոս Դրո Կանայանը 1954 թվին, Ուոթըրթաունն (Մասաչուսեց) իր բնակարանին մեջ:

Սրտառուչ այս դեպքը կապացուցանե ա՛յն, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ազգրնտիր կաթողիկոսը՝ անփոխարինելի ՀԱՅՐՆ է համայն հայության:

Սրտառուչ այս դրվագը կապացուցանե նաև ա՛յն, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իրոք Հայ ժողովուրդի «Ազգային Եկեղեցին» է:

Այս իրողությանց լույսին տակ, Վեր. Տարագճյանի շղթայագերծած պայքարը, ընդդէմ Հայաստանյայց Եկեղեցվո «Ազգային Եկեղեցի» ըլլալու հանգամանքին, ոչ թե լուր անճիշտ է, այլ նաև ընդդէմ խթանի ազացել է:

Վեր. Տարագծյան գացեր է մինչև Հիտլերի իշխանությանց օրերը: Անիմաստ է անկապակից դեպքեր հիշեր է՝ առանց կարենալ ապացուցանելու իր միտքը:

Հիտլերը գեշ գինակից մը չէ անշուշտ, բայց ինչո՞ւ մոռանալ Ներոնը, կամ Լենկ Թիմուրը:

Բայց ինչո՞ւ: Ի՞նչ ապացուցանելու համար: Հիտլերի և Բողոքական Եկեղեցվո գործակցությունը փա՞ստ մըն է, որ Հայաստանյայց Եկեղեցին ազգային եկեղեցի ըլլալու իրավունք չունի:

Վեր. Տարագծյան չանդրադառնա՞ր, որ իր այս մեջբերումները ծիծաղելի են պարզապես:

Ափսո՛ս, շատ ավելի իրատես կրնար ըլլալ ան և համեստ՝ տեսնելու ճշմարտությունը: Տեսնելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո գերադաս դիրքը, անոր «Մայր Եկեղեցի» ըլլալու իրողությունը, և ըսեր հետևյալը.

– Այո՛, արդար է և իրավ, որ մենք՝ բոլոր հայերս, անխափար ընդունինք, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Հայ ժողովուրդի ազգային եկեղեցին է, Առաքելական է և ընդհանրական ու մանավանդ մեր Մայր Եկեղեցին է:

Եթե վեր. Տարագծյան նման հայտարարություն մը կատարեր, ավելի չէ՞ր հարգվեր:

– Անշուշտ, որ կը հարգվեր:

A

«ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՆԵՐԻ» ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր նախորդ հոդվածին մեջ հիշատակած էինք, որ «Հայ Ավետարանական Համաշխարհային Խորհուրդը» ծրագրած է կատարել միսիոնարական մեծ արշավ մը՝ դեպի Հայաստան:

Վեր. Վ. Թուրիկյան կը վկայե, որ այս առաքելության պիտի մասնակցին 15 «Ավետարանչական» կազմակերպություններ, բազմաթիվ հարակից երիտասարդական ուժեր և միսիոնարներ:

Կը հայտարարվի նաև, որ այս արշավին նպատակն է Հայաստանի մեջ կիրակնօրյա դպրոցներ բանալ, Աստվածաշունչներ սփռել, նաև քրիստոնեություն քարոզել՝ արդեն իսկ քրիստոնյա մեր հայրենաբնակ ժողովուրդին:

Հայաստանյան մամուլեն հաղորդող լուրեր կը վկայեն սակայն, որ այս քարոզչությունները տարիներե ի վեր սկսված են արդեն՝ Պրանսայեն ժամանած Ռընե Լևոնյան անուն վերապատվելի մը առաջնորդությամբ:

Վանաձորի բնակիչ թղթակից մը՝ Արմեն Սարգսյան, «Ազգ» թերթին մեջ կը նկարագրե, որ «ուռուցիկ գրպաններով ավետարանչականներ անցել են իրենց սովորական զբաղմունքին՝ հոգեորոշյալ»:

Թղթակիցը կը նկարագրե նաև, որ այս «հոգևորսուլությունները» (մարդորսուլություն) շատ անգամ կը կատարվին «մի կիլոգրամ լոբու և մի լիտր ձեթի» նպաստատվություններով:

Ինչպես կը տեսնվի, 150 տարիներ առաջ ամերիկացի բողոքական միսիոնարներու «հոգեորսություն» կատարելու նույն մեթոդն է, որ կը կիրարկեն նաև ներկայիս Հայաստանի մեջ, Հայ «Ավետարանականներ», այսինքն հայանուն բողոքականներ:

Եվ անոնք կընեն այս՝ մեր հայրենի ժողովուրդի տնտեսական տագնապալի վիճակեն օգտվելով:

Այս տխուր երևույթը կը հիշեցնէ մեզի շուրջ 120 տարիներ առաջ տեղի ունեցած նմանօրինակ պատկեր մը, որուն նկարագրականը կը ներկայացնէ մեզի մեր մեծանուն երգիծաբանը՝ Հակոբ Պարոնյան:

1875 թվի Սեպտ. 22-ին «Լույս» թերթին մեջ Հ. Պարոնյան, իր օրը օրին ներկայացուցած «Խտխտում» վերնագրով հոգվածներով, նախ կը նկարագրէ Հայաստանի ներքին գավառներու մեջ Հայ ժողովուրդի աղիտալի վիճակը: Թուրքերու կողմէ հայերու վրա գործադրված հարստահարությունները, հայ անմեղ աղջիկներու վրա կատարված բռնաբարությունները, հայ շինականներու ունեցած ինչքերու ապօրէն գրավումները և այլն: Եվ ապա, ան կը նկարագրէ նույն օրերուն՝ Հայ Բողոքականներու հրատարակած «Ավետաբեր» անուն թերթին մեջ լույս տեսած գրություն մը, ուր կըսվին հետևյալները.

«Մինչև որ Կիրակի օրերը պատանիները տուն մը չժողվեք և անոնց Սուրբ Գիրք կարդալ չտաք, ձեր ապագան վտանգի մեջ է...: Ո՛վ Ամերիկացի Քրիստոնյայք, եկեք միաբերան աղոթք ընենք, որպեսզի հայերը ընդունին մաքուր քրիստոնեություն մը (իմա՛ բողոքականություն), որ միայն պիտի պահէ գիրենք անհավատութենէ:

Այս տողերէն հստակ կերևի ժամանակակից Հայ Ավետարանականներու ազգային ինքնագիտակցութենէ ամբողջապես զուրկ ըլլալը, նաև անոնց հոգը անգամ չըլլալը, որ հայեր գավառներու մեջ ինչպիսի հարստահարություններու կեն-

Թարկվին: Անոնց միակ նպատակը, ինչպես կը հայտնվի, «մաքուր քրիստոնեութիւն» անվան տակ բողոքականութեան քարոզչութիւնն է:

Հակոբ Պարոնյան, իրեն հատուկ սրամտութեամբ կը հեզնեան շուշտ Հայ Ավետարանականներու հետապնդած մարդորսական դիտավորութիւնները՝ սա բառերով.

«Մինչդեռ մեր մորեւքն այսպէս բռնկած է, անդիւն «Ավետաբեր» բողոքականներ՝ կողման մեր մորուքեն իրենց սիկաուր վառելու: Ամերիկացիներու վառարաններուն (սոպա) և արդուկներուն (յութիւն), մաքուր ըլլալը գիտեինք, բայց անոնց քրիստոնեութեան (Ավետարանչութիւն) մաքուր ըլլալը չէինք գիտեր:

«Ավետաբեր»ի խմբագիրները՝ Տիրոջ անունը իրենց դրամագլուխ ըրած՝ ազվոր կուտեն կը խմեն և մեզի «Մաքուր Քրիստոնեութիւն» կը քարոզեն»: Նույն պատկերն է, որ կը կրկնվի ներկայիս Հայաստանի մեջ՝ Վեր, Ռընե Լեոնյանի և իր գործընկերներու ձեռքով:

«ԵՐԵՔ ՆԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ»

Վերջերս մամուլի մեջ երևցած հաղորդագրութիւն մը կը վկայե, որ Վեր. Ռընե Լեոնյան, «Ավետարանչականների Առաջնորդ» անվալյալը, լայն նվիրատվութիւններ կատարած է աջ և ահյակ և հայտարարած, որ նախապէս իրենց ունեցած մեկ ժողովարանի փոխարեն՝ ան հաջողած է այժմ բանալ 50 նոր ժողովարաններ և Աստվածաբանական ճեմարան մը Հայաստանի մեջ: Հայ Ավետարանչականները Հայաստանի բնակչութեան 2%-ը կը կազմեն միայն: Արդ, հարց է գիտենալ, թե այդ 2%-ը կազմող Ավետարանչականներու համար 50 հատ ժողովարանները շատ չե՞ն միթե: Հարց է գիտենալ նաև, թե ուրկե՞ կողման արդյոք այսպիսի կառուցումներ կատարելու,

ժողովարաններ բանալու, նպաստներ բաշխելու, առատաձեռն նվիրատվություններ կատարելու առասպելական գումարները:

Ան իր կատարած լայն նվիրատվություններու շնորհիվ՝ հաջողած է շահիլ նաև Հայաստանի Գրողներու Միության համակրությունը, որոնք իրեն շնորհած են «Եղիշե Չարենցի» ի անվան շքանշանը:

Մենք այնպես կը կարծեինք, որ «Եղիշե Չարենց» ի անվան շքանշանը կը տրվի գրական, գեղարվեստական և հայ մշակութային մարզերէ ներս՝ արժանիք և վաստակ ունեցող հեղինակներու և արվեստագետներու: Եղիշե Չարենցի անվան շքանշանի մը տվչությունը նման անարժան անձերու մեղանշում մըն է, մեր կարծիքով, մեծանուն բանաստեղծի նվիրական հիշատակին:

Ռընէ Լևոնյան չունի այդ արժանիքներէն և ոչ մեկը: Նյութական աջակցություններ կատարած ըլլալու իր արարքը, եթէ չունի հետին նպատակ, այդ պարագային այդ արարքը կարելի է գնահատել որպէս բարեգործություն: Բայց մենք ունինք պատճառներ կարծելու, որ Վեր. Ռընէ Լևոնյանի և իր «ուռուցիկ գրպաններով» ավետարանչական գործակիցներու նյութական հատկացումները կը հետապնդեն մեկ նպատակ միայն այն է՝ հայերը դավանափոխ դարձնել ղեպի ավետարանչականություն, այսինքն է՝ բողոքականություն:

Հայաստանյան մամուլն է, որ կը վկայէ այս: Հայաստան հրատարակվող «Ազգ» թերթի այլ թղթակից մը, Վանաձորէն Գագիկ Անտոնյան, կը գրէ հետևյալը. «...Եհովայի վկաներ, Հոգեգալստականներ, Ազգենտիստներ, հիմա էլ Ավետարանչականներ, օգտվելով մեր աղքատ բնակչության սոցիալական ծանր վիճակից, մեր քաղաքը բաժանել են միմյանց միջև.. կառուցում են աղոթատներ, գնում են խանութներ և եկամուտը ծառայեցնում են հոգեորսության նպատակներին»: «Մինչ մեր մորուքը բռնկած է (պիտի ըսեր Պարոնյան), այս

երանելիները եկած են իրենց սրկառը վառելու մեր բռնկած մորուքեն»:

Մարդատրսուլթյան փոխարեն «հոգեորսուլթյուն» բառը կը գործածեն Հայաստանի մեջ՝ բարացուցելու համար աղանդներու և Ավետարանչականներու դավանափոխության գործունեութիւնը: «Հոգեգողութուն» է ավելի ճիշտ բառը՝ կատարվող այս ապօրինութեանց:

Վեր. Ռընէ Լեոնյանի ընծայված՝ «Եղիշէ Չարենց»ի անվան շքանշանի տվչութեան հանդեսին, շքանշանակիրը կատարած է նաև շատ ուշագրավ և ապշեցուցիչ հայտարարութիւն մը:

Ան, խոսելով Հայաստանի մեջ աղնադավորներու կատարած սանձարձակ գործունեութեան մասին, ըսած է հատեալը. «Երեք Հայաստանյայց Եկեղեցիները բավարար ջանք չեն թափեր, ժողովուրդը հաղորդակից դարձնելու Հայ Եկեղեցվո հավատքին»:

Ճշտեմք, որ «Հայ Եկեղեցվո հավատքեն» առաջին հեռացողը, որպէս Բողոքական կամ Ավետարանչական, ինքն է՝ Վեր. Ռընէ Լեոնյանը:

«Հայ Եկեղեցվո հավատքը»՝ Հայ Եկեղեցվո դավանութիւնն է, որուն հետ ոչ մեկ առնչութիւն կապ ունի «Հայ Ավետարանչականութիւնը»:

Վեր. Ռընէ Լեոնյան գիտակցաբար կը խեղաթյուրէ իրողութիւններ, մեր ժողովուրդին տալու համար այն պատրանքը, որ Հայ Եկեղեցվո և Հայ ավետարանչականներու դավանութիւնները նույնն են:

Ան, նաև Հայաստանյայց Եկեղեցվո անունով կօժտէ «Հայ Ավետարանական» և «Հայ Կաթողիկէ» եկեղեցիները:

«Երեք Հայաստանյայց Եկեղեցիներ» կանվանվանն զանոնք Վեր. Ռընէ Լեոնյանի այս արարքը ևս՝ դիտավորյալ նենգափոխութիւն մըն է:

Հայ եկեղեցական պատմություն մեջ չեն եղած և չկան երբեք «Երեք Հայաստանյայց Եկեղեցիներ»: Կա միայն մեկ հատ «Հայաստանյայց Եկեղեցի», որ կը ճանչցվի նաև որպես «Հայ Եկեղեցի» և «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի»:

Համայն քրիստոնյա աշխարհը և միջազգային համայնագրիտարանները կը հաստատեն այս իրողությունները:

Հայ ժողովուրդի եկեղեցական պատմություն մեջ, միայն վերջին մեկ երկու դարերու ընթացքին օտար միսիոնարներու ձեռքով գոյություն առած են նաև երկու այլ հարանվանություններ՝ «Հռովմեական Հայ Կաթողիկե (Կաթողիկե) Եկեղեցի» և «Հայ Բողոքական (Ավետարանական) Եկեղեցի»:

Պատմականորեն անցյալին Հայաստանի մեջ գոյություն ունեցած են նաև Հունադավան (Հայ Քաղկեդոնական) հայեր, որոնք հետագային դադրած են ընդմիջտ:

Ներկայիս Հայաստանի մեջ կան շարք մը այլ հարանվանություններ և աղանդներ: Այսպես, օրինակ՝ կան «Հայ Պենտեկոսականներ», «Հայ Մորմոններ» և «Հայ Եհովայի Վկաներ»:

Հարց տալ պետք է վեր. Ռընե Լևոնյանին և վեր. Վ. Թուլթիկյանին, թե ինչո՞ւ «Հայաստանյայց Եկեղեցի» այս հատուկ անունը կուզեն ընծայել իրենց, և «Հայ Կաթողիկե»ներու և ոչ՝ մյուսներուն:

Ինչո՞ւ «Երեք» և ոչ թե «Յոթը» Հայաստանյայց եկեղեցիներ:

Զարմանալի կը գտնենք նաև՝ վեր. Ռընե Լևոնյանի «Բավարար Ջանք թաելու» փուլթաջանությունը, որպեսզի կասեցնեն եղեր, մյուս չորս հարանվանությունց և աղանդներու կատարած «հոգեորսություններ»ը, իբրև թե ի պաշտպանությ-

յուն՝ «Հայ Եկեղեցվո Հավատքին»:

Հարց տանք շքանշանակիր Վեր. Ռընե Լևոնյանին, թե ի՞նչ է տարբերությունը իր կատարած «Հոգեորսուլթյան», և մյուս հարանվանուլթյանց և աղանդներու կատարած «Հոգեորսուլթյան»:

«Հայ Եկեղեցվո Հավատքին» կամ դավանուլթյան դեմ՝ նույնքան մեղավոր և այլանեղի արարք մըն է «Հայ Ավետարանչականներու» կատարած մարդաորսուլթյունը, որքան՝ մյուս հարանվանուլթյանց և աղանդներու կատարած մարդաորսուլթյունները:

Տարբերությունը, որ մենք կը տեսնենք հետևյալն է. Վեր. Ռընե Լևոնյան կը հիշցնե մեզի հին մանկական առակին այն ծպտված գայլը, որ ոչխարի մորթով կը մերձենա Հայ Եկեղեցվո անմեղ, անոթի և միամիտ գառնուկներուն՝ զանոնք հափշտակելու և լափելու դիտավորուլթյամբ՝ «Հայաստանյայց Եկեղեցվո» դիմակով:

«ՄԱՐԴԱՌՍՈՒԹՅՈՒՆ»

ԿԱՄ «ՆՈԳԵՈՐԴՈՒԹՅՈՒՆ»

Մեր ձեռքը անցավ անվանի գրագետ բանաստեղծ՝ Անդրանիկ Ծառուկյանի հրատարակած՝ «Նայիրի» գրական թերթի հին թիվ մը, ուր հրատարակված կա մեր մեծանուն նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի մեկ հին հոդվածը՝ լույս տեսած 1912 թվին, Եվդոկիո մեջ հրատարակված «Իրիս» անուն թերթի մեջ, «Սպիացող վերք» խորագրով:

Այս հոդվածը ամբողջուլթյամբ հրատարակված է «Նայիրի»-ի 1975 հուլիս 6 թվին մեջ: Հոդվածին պատճենը կը գտնվի Երևանի Գրականուլթյան թանգարանին մեջ:

Հողվածի բովանդակություն մասին հակիրճ ծանոթություն մը ունի Անդրանիկ Ծառուկյան, որ ավելորդ չենք նկատեր մեջբերել հոս.—

«... Հողվածը գրված է շատ բուռն լեզվով և մեծ գայրույթով: Եվ ի՛նչ գայրույթ. կատարյալ փոթորիկ մը, ուր անճանաչելի է «Հեթանոս Երգերու» վսեմաշուք քերթողը: Պատճառ՞: Ճիզվիտ կաթոլիկ վարդապետի մը մարդորսական արարքները:

Վարուժանի անհավատալիորեն բուռն այս ելույթը կրկնապես նշանակալից է, մանավանդ անով, որ ինք դավանանքով կաթողիկե է, կրնդզի սակայն հավատքը սուևտուրի վերածող քարոզիչներու դեմ, որոնք շրջան մը կը վխտային մեր գավառներուն մեջ...»:

Ինչպես որ կը վխտան ներկայիս Հայաստանի մեջ:

Վերոհիշյալ «Սպիացող վերք» հողվածին մեջ, Դանիել Վարուժան, արդարև պարսավի հասնող գայրույթով մը կը խժբժե ճիզվիտների վարժարանի *Pere Riondel* (Հայր Ռիոբտել) անուն մեծավորը, որ ամեն ջանք ի գործ կը դնե հայ մանուկները կաթոլիկացնելու, այսինքն «բարոյապես խաթարելու», կըսե Դանիել Վարուժան: Ան նաև կը հիշե հին ժողովրդական սա առածը. «Ուր լեչ կա, հոն կը հավաքվին ագռավները»:

Ահա թե ինչպես կը պատկերացնե մեր մեծանուն բանաստեղծը՝ ճիզվիտ կաթոլիկ վարդապետներու մարդորսական արարքները:

Դանիել Վարուժան ի ծնե կաթոլիկե ըլլալով, ճիզվիտներու դեմ իր ցուցաբերած այս զարմանալի գայրույթն ու դժգոհությունը, կը կարծենք որ ունի այլ պատճառ՝ բացի «բարոյական խաթարումե»:

Այդ պատճառը մեզի կը թվի որ հետևյալն է.

Հայաստանյայց Եկեղեցին և Հայաստան մեր հայրենիքը՝ 17 դարեր շարունակ կազմած են անքակտելի միություն մը:

Հայ թագավորները և մեր կաթողիկոսները միասնաբար և համագործակցաբար կառավարած են մեր ժողովուրդը:

Երբ կորսնցուցինք մեր թագավորությունը, ու երբ մեր երկիրը մնաց գերության մեջ, Հայաստանյայց Եկեղեցին իր նվիրապետական Աթոռներու գահակալներով կառավարեց մեր ժողովուրդը անվերջ դարեր:

Հայաստանյայց Եկեղեցին նաև իր անհարմար սրբատեղիներով, իր նվիրապետական Ս. Աթոռներով, իր հայ մշակույթի սուրբերով՝ Հայ ազգն է, որ կը մարմնացնե:

Հայ Եկեղեցիի զավակները մարդորսաբար Հայ Եկեղեցիեն հեռացնելը պառակտիչ և ազգաքանդ արարք մըն է: Հայց Եկեղեցիո պառակտումը համազօր է Հայ ազգի պառակտման:

Ու այս շատ լավ գիտեր մեր անմահ և հայրենասեր բանաստեղծ Դանիել Վարուժանը: Ահա այս է պատճառը իր զայրույթին՝ ընդդեմ Հայաստանյայց Եկեղեցին տկարացնել և պառակտել ուզող ձիգվիտներուն:

Վերջերս մամուլի մեջ կատարված հարցազրույցի մը ընթացքին՝ Գերշ. Շահե Արք. Աճեմյան հիշած է, որ Հայաստանի մեջ խղճի ազատություն պետական օրենքը չարտոներ մարդորսությունը: Եվ այս ի շահ ազգին:

Այս կարևոր պատճառով ալ Հայաստանի պետական իշխանությունն անդրանիկ պարտականությունն է ընդմիջտ պակասեցնել կրոնական մարդորսությունները, փուլթ չէ, թե որո՛նց ձեռքով կը կատարվի այդ:

Հակառակ այս իրողությունն, սակայն, Հայաստանի ներկատնտեսական անբարենպաստ պայմանները առիթ տված են, որ շարք մը զգվելի ազանդներ, նաև Հայ Ավետարանական «ուռուցիկ գրպաններով» պատվելիներ, նպաստներ և նյութական հատկացումներ ընծայելով կատարեն անվերջ մարդորսություններ:

Անոնց այս ընթացքը անգամ մը ևս մեզի կը հիշեցնե
Դանիել Վարուժանի ժողովրդական հին առածը, որ կըըսե.
«Ուր լեշ (ղիակ) կա, հոն կը հավաքվին ազուավները»:

Թող լավ իմանան սակայն, վերոհիշյալ ամեն կարգի մար-
դորաները, կամ «հոգևորաները», որ Հայաստանը «լեշերու»
երկիր չէ:

Վե՛րջ, ուրեմն, ամեն կարգի ղեակապուտ ազուավներու՝ և
ազգադավ մարդորաներու:

A

«ԿԱԹՈՂԱԿԱՆ ԳԻՐՔ» ՄԸ, ԼԻ՝ «ԿՈԹՈՂԱԿԱՆ» ՍՈՒՏԵՐՈՎ

(ՎԵՐ. Վ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻ «ԿԱՐԵՎՈՐ ԴԵՄՔԵՐ ԵՎ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԳՐՔԻՆ
ԱՌԹԻՎ)

Հայաստանի մեջ, Քրիստոնեություն պետական կրոն հռչակման 1700 ամյակի առթիվ, Վեր. Վ. Թուլթիկյան լույս ընծայած է վերոհիշյալ գիրքը 2001 թվականին:

Շքեղ և ճաշակավոր ոճով լույս ընծայված այս գիրքը, հրատարակությունն է «Հայկական Ժառանգական Հանձնախումբ»-ի մը: Վեր. Վ. Թուլթիկյան հեղինակ է քսանե ավելի գիրքերու: Մեր տեսած իր բոլոր գրքերն ալ հրատարակված են այս «Հանձնախումբին» կողմէ:

Անորոշ է ինքնությունը այս «Հանձնախումբ ի անդամներուն: Անորոշ է նաև թե այս «Հանձնախումբ»ը Վեր. Վ. Թուլթիկյանի գործերը հրատարակելէ զատ, այլ գործունեություն ունի՞ թե ոչ:

Վեր. Վ. Թուլթիկյանի վերոհիշյալ գրքի հրատարակության վաղորդայնին, հոգված մը լույս տեսավ շարք մը հայ թերթերու մեջ, շուայլ գովաբանություններով, ուր նաև կլսվեր, որ այս գիրքը «կոթողական» գործ մըն է:

Հոգվածին ներքև, սակայն, որևէ անձի անուն չկար: Չկար ոչ մեկ ստորագրություն: Հոն՝ որպես ստորագրություն, կար դարձյալ «Հայկական Ժառանգություն Հանձնախումբ»-ի անունը:

Նման շուայլ գովեստներով գրված հոդվածի մը ներքև, ոչ թե լոկ պատշաճ էր, որ հոդվածագրին անուը կամ ստորագրուըթյուըը գրված ըլլար:

Պատշաճուըթյուըը կը պահանջեր, որ Վեր. Վ. Թուըթիկյան` ինք թուըլ չտար անստորագիր հոդվածի մը երևնալը հայ թերթերու մեջ: Որովհետև ընթերցողներ կրնան ենթադրել, որ Վեր. Վ. Թուըթիկյան` թերևս ինք իսկ գրած ըլլա, վերոհիշյալ գովասանալից հոդվածը, իր և իր գրքի մասին:

Մենք նախապես կարդացած էինք այդ հոդվածը, առանց գիրքը տեսած ըլլալու: Հետագային (չատավելի ուշ) բարեկամ մը Դիտրոյիդեն մեզի ղրկեց գիրքը:

Գիրքը կարդացած ըլլալե ետք, մենք եղանք չափազանց հուսախաբ, ոչ թե որովհետև գիրքը հեռու էր«կոթողական գիրք» մը ըլլալե (ճիշտ հակառակը), այլ որովհետև գիրքը, լեցուն գտանք պատմական անճշտուըթյուըններով և խեղաթյուըրումներով:

Հեղինակը նույնիսկ հավատարիմ չէ մնացած իր գրքի խորագրին, որ իբրև թե պիտի ներկայացներ «կարևոր դեմքեր և դեպքեր Հայ Քրիստոնեուըթյան պատմուըթյան մեջ»:

Դիտել տանք նախ, որ հեղինակը «Հայ քրիստոնյա Պատմուըթյուն» ընդհանուըր տարազը որդեգրած է, որպեսզի Հայաստանյայց Եկեղեցվո պատմուըթյան առընթեր, հոն տեղավորե նաև Հայ Կաթոլիկ և Հայ Բողոքական Եկեղեցվո կապված դեմքեր և դեպքեր, ինչ որ հասկանալի է անշուշտ:

Եվ սակայն Վեր. Վ. Թուըթիկյան նյուըթեն չեղած է և ինկեր է միջ հարանվանական տարակարծուըթյանց, վեճերու և անտեղի վերագրումներու, որոնք ամբողջապես դուըրս կիյնան իր ընտրած խորագրի թելադրանքեն:

Գիրքը կը բաղկանա շուըջ 300 էջերե, որուըն 60 էջերուըն վրա գետեղված են շարք մը գիրքերու և հեղինակներու անուններ, որոնց «Ծանոթագրուըթյուն» վերնագիրը տված է Վեր. Վ. Թուըթիկյան: Կը թվի, որ Վեր. Վ. Թուըթիկյան չի գիտեր

տարբերությունը «Ծանոթագրություն» և «Օգտագործված Աղբյուրներուն»:

Մեր կողմն ավելորդ ժամավաճառություն պիտի ըլլար մեկ առ մեկ թվել, Վեր. Վ. Թուրիկյանի այս գրքին մեջ ներկայացված թերիները, անճշտություններն ու խեղաթյուրումները: Այդ պատճառով ալ պիտի բավականանաք ներկայացնել անոնցմէ միայն մեկ քանին:

ԽԵՂԱԹՅՈՒՆՆԵՐ

Վեր. Վ. Թուրիկյան կը գրէ (էջ 9). «Հայ պատմաբաններն ոմանք կը մերժեն Հայ Եկեղեցւո առաքելական ծագումն ու առաքելական հաջորդականությունը այն հիման վրա, թէ մեր և օտար եկեղեցիներու քննադատական պատմությունը այդ հիմաստով մեզի վավերական փաստեր չեն հայթայթեր»:

Այս քիչ մը երկար նախադասությունը հեռու է հայերեն ըլլալէ: Հոն կան քերականական, կազմութեան և գաղափարի սխալներ: Գիրքը կը վխտա նման սխալներով:

Տասնյակներով գրքերու հեղինակ՝ Վեր. Վ. Թուրիկյանի համար թույլատրելի չէ, որ այսպիսի սխալ նախադասություններով լեցուն ըլլար իր այս նոր գիրքը:

Գալով իր վկայություն, որ իբրև թէ «Հայ պատմաբաններն ոմանք կը մերժեն (եղեր) Հայ Եկեղեցւո Առաքելական ծագումն ու Առաքելական հաջորդականությունը...»:

Հարց տանք, թէ ինչո՞ւ Վեր. Վ. Թուրիկյան չէ տված անունները այդ «Հայ պատմաբաններուն»: Հարց է գիտենալ նաև, թէ ի՞նչ են Վեր. Վ. Թուրիկյանի հիշատակած այդ «վավերական հիմները» զորս հերյուրած են այդ անանուն «Հայ պատմաբանները»:

Եթէ Վեր. Վ. Թուրիկյան իր հիշատակած հարյուրավոր աղբյուրներն կարդացած ըլլար միայն Օրմանյան Սրբազանի «Հայ Եկեղեցին» գրքին՝ Բ. գլուխը, իր մտքին մեջ բնավ տարակույս պիտի չմնար, որ Հայաստանյայց Եկեղեցին արդարև

«Առաքելական ծագում» ունի և մեր կաթողիկոսները վավերականորեն հաջորդած են Թադեոս և Բարդուղիմեոս Առաքյալներուն:

Վեր. Վ. Թուլթիկյանի հիշած այդ անանուն հայ պատմաբանները, ավելի^օ հավաստի, ավելի^օ կարևոր «պատմաբաններ» են, քան մեր պատմահայր Մովսես Խորենացին, Փավստոս Բյուզանդը, Գրիգոր Տաթևացին և մեր այլ պատմիչները, որոնք շուրջ 16 դարեր առաջ, իրենց պատմագրքերուն մեջ վկայած են, որ Թադեոս և Բարդուղիմեոս Առաքյալները՝ եղած են Հայ ժողովուրդի Քրիստոնեություն «Առաջին Լուսավորիչները»:

Դարձյալ հարց է գիտենալ, թե Վեր. Վ. Թուլթիկյանի հիշած այդ անանուն «Հայ պատմաբանները» արդյոք ավելի^օ հավաստի պատմաբաններ են, քան թե Քրիստոնեություն առաջին Հուլյն պատմիչը՝ Եվսեբիոս Կեսարացին, որ իր պատմության մեջ կը հաստատե Թադեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի մեջ կատարած քարոզչությունը: Նույնը կը վկայեն նաև Լաբուլենիա Ասորի պատմիչը և Փիթի Լատին պատմիչը: Այս օտարազգի պատմիչներու շուրջ 17 դարեր առաջ տված գրավոր վկայություններն են վավերականը, թե Վեր. Վ. Թուլթիկյանի հիշատակած անանուն «Հայ պատմաբաններուն»ը:

Կարևոր է նաև հիշել, որ շուրջ ինը հարյուր միլիոն հավատացյալներ ունեցող Կաթողիկե Եկեղեցվո Քահանայապետը՝ Հռովմի ներկա Սրբազան Պապը, կընդունի Հայաստանյայց Եկեղեցվո Առաքելականությունն ու Առաքելական Հաջորդականությունը:

Նույնը կընդունին նաև Ռուս Օրթոդոքս, Հուլյն Օրթոդոքս, Ասորի, Ղպտի և շարք մը այլ արևելյան եկեղեցիները:

Պատմական, իրավական այս ապացույցներեն անկախաբար նույնքան կարևոր ապացույց է նաև մեր Ազգային Ավանդությունը, որ հավելաբար կը հաստատե Սուրբ Թադեոս և

Բարդուղիմեոս Առաքյալներու Հայաստանի «Առաջին Լուսավորիչներ» ըլլալը:

Մեր Ազգային Ավանդութեան մասին վերապահութիւններ ունի Վեր. Վ. Թուրիկյան, հետեւաբար Վեր. Պ. Տարագճյանի: Եվ այս շատ ցավալի է անշուշտ, որովհետեւ ժողովուրդի մը Ազգային Ավանդութիւնը, որպէս անգիր պատմութիւն նույնքան ճիշտ է և վավերական, որքան գրավոր պատմութիւնը:

Ի՞նչ է ժողովուրդի մը Ազգային Ավանդութիւնը, (Tradition) – Որպէս անգիր պատմութիւն՝ դարերու ընթացքին սերունդէ սերունդ փոխանցված ամեն պատվեր, կարգ, դավանանք և պատմական իրադարձութիւն, ազգային ավանդութիւններն են այդ ժողովուրդին:

Հայ ժողովուրդի Ազգային Ավանդութիւնները ուրանալը՝ համազոր է հայութիւնը ուրանալու:

Պետրոս Առաքյալի Հռովմի մեջ կատարած առաքելութիւնը հիմնված է լոկ Հռովմեական Եկեղեցւո Ազգային ավանդութեան վրա: Որպէս այդ ավանդութեան կապված փաստ՝ Հռովմեական Եկեղեցին մատնիչ կընէ Հռովմի մեջ գտնվող Պետրոս Առաքյալի գերեզմանը:

Ճիշտ այնպէս, ինչպէս որ մենք ևս որպէս փաստ, շատ ավելի վավերականորեն քան Հռովմեական Եկեղեցին ցույց կու տանք Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս Առաքյալներու գերեզմաններուն գոյութիւնը, պատմական Հայաստանի մեջ: Բարդուղիմեոս Առաքյալի գերեզմանը: Բարդուղիմեոս Առաքյալի գերեզմանը կը գտնվի Աղբակի մեջ (Բաշքալէ), իսկ Թադեոս Առաքյալի գերեզմանը՝ Արտագի մեջ (Մակու), ներկա (Հյուսիս արևմտյան Պասկաստան՝ Թադեի վանք):

ԶԱՐԿԱՆԱԽՆ ԵՎ ԱՊՇԵՑՈՒՅԻՉԸ

Բողաքական հարանվանություն համար (Ավետարանչական) անհիմաստ և անարժեք հատկանիշ մըն է՝ Կաթողիկ, Օրթոդոքս և Հայ Եկեղեցիներու համար մեծ կարևորություն ներկայացնող Առաքելական հատկանիշը, որ կը նշանակե Առաքյալներուն ձեռքով հիմնված: Վեր. Վ. Թուրիկյան ըլլալով բողոքական հոգևորական մը՝ հակա-Առաքելական է: Կը մերժե Առաքելական հաջորդականություն կարևորությունը:

Հետևաբար զարմանալի է և ապշեցուցիչ, որ իր այս գրքին մեջ, ուր պիտի ներկայացնենք ան, միայն քրիստոնեական դեպքեր և դեմքեր, կ'արծարծեն նյութ մը՝ «Առաքելականություն», որուն չի իսկ հավատար ինք:

Կը թվի, որ Վեր. Վ. Թուրիկյան, հետևողաբար Վեր. Պ. Տարագճյանի, մարմաջ մը ունի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին նսեմացած տեսնելու իր պատմական հատկանիշներեն և արժանիքներեն: Պիտի անդրադառնանք:

ԱՆՆԵՐԵԼԻ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՒՏԵՐ

«Կարևոր դեպքեր և դեմքեր Հայ Քրիստոնեական Պատմություն մեջ» գրքի հեղինակ՝ Վեր. Վ. Թուրիկյան, շատ բծախնդիր պետք է ըլլար, որ նման (իբրև թե պատմական) այս գրքեն ներս՝ անճշտություններ չսպրդեին: Դժբախտաբար, սակայն, գիրքը կը վխտա բազմաթիվ անճշտություններով և սուտերով:

Թվենք միայն մի քանին:

Օրմանյան սրբազանի կյանքին և գործին մասին Վեր. Վ. Թուրիկյան կը գրե հետևյալը (էջ 188). «...Օրմանյան իբրև պատրիարք կը ծառայե 12 տարի: Այս շրջանին է, որ Սուլթան Համիդ կը սկսի բնաջնջել Թուրքիո (գրե՛ Հայաստանի) ներքին գավառներու մեջ ապրող հայությունը...»: Այս վկայությունը ամբողջապես անճիշտ է և հերյուրածո:

Սուլթան Համիդի վերոհիշյալ ջարդերը գործադրված էին

1895-1896 տարիներու ընթացքին: Այդ շրջանին Պոլսո Հայոց Պատրիարքն էր Մատթեոս Արք. Իզմիրլյան, որ 1896 Հուլիս 22-ին հրաժարեցավ իր պատրիարքութենէն: Իր հրաժարումեն անմիջապէս ետք՝ պատրիարքական տեղապահ ընտրվեցավ Բարդուղիմեոս Արք. Չամիչյանը:

1896 թվի Օգոստոսի 14-ին տեղի ունեցավ Պանք Օթոմանի գրավումը խումբ մը հայ կուսակցականներու կողմէ: Հետեանքը եղավ այն, որ 10.000 հայեր ևս ջարդվեցան Պոլսո մեջ: (Նախապէս ներքին գավառներու մեջ նահատակված էին շուրջ 300.000 հայեր):

Վերոհիշյալ ջարդերու գործադրութեան շրջանին, Օրմանյան Սրբազան պատրիարք ընտրված չէր դեռ:

Եվ ա՛յս կապացուցանե ինքնին, որ Վեր. Վ. Թուրքիայի վերագրավումը, որ իբրև թէ «Օրմանյան Սրբազանի պատրիարքութեան շրջանին տեղի ունեցան Համիդյան ջարդերը» ամբողջապէս հերյուրածո և անճիշտ է:

Վեր. Վ. Թուրքիայի կը կատարե նաև այլ անճիշտ վկայութիւն մը: Ան կը գրե նաև, որ իբրև թէ Սուլթան Համիդի գործադրած ջարդերուն պատճառով Օրմանյան Սրբազան «...ստիպվեր է օտար դեսպաններու միջամտութիւնը հայցել՝ վերջ դնելու համար սուլթանին արյունահեղութեանց»:

Այս վերագրումը ևս ամբողջապէս անճիշտ է և հերյուրածո, որովհետև Օրմանյան Սրբազան չէր կրնար նման «միջամտութիւն մը հայցել օտար դեսպաններէն», քանի որ պատրիարք ընտրված չէր դեռ: Ան պատրիարք ընտրվելէն ետք ալ նման «միջամտութիւն մը» երբեք «հայցած» չէ:

Օրմանյան Սրբազան Պոլսո Պատրիարք ընտրվեցավ 1896 Նոյեմբեր 6-ին:

1896 Նոյեմբերէն մինչև 1908, 12 տարիներ կը տևե Օրմանյան Սրբազանի պատրիարքական պաշտոնավարութիւնը: Այս շրջանին ան ճշմարիտ գազանագուսպի մը նման կը հաջողի

զսպել Սուլթան Համիդի ջարդարարուժյունները: Այդ տասներկու տարիներու ընթացքին ոչ մեկ ջարդ տեղի կունենա, ոչ մեկ՝ կոտորած: Ընդհակառակը՝ Պանքայի գրավման դեպքին պատճառով, «քաղաքական» անվան տակ, Պոլսո բանտերուն մեջ բանտարկված կը մնային 1200 հայեր: Օրմանյան Սրբազան կը հաջողի Սուլթան Համիդը որ ներումն չնորհե այդ բանտարկյալներուն: Եվ ազատ կարճակվին անոնք: Բանտերու մեջ կային նաև մահվան դատապարտված 30 հայեր: Օրմանյան Սրբազան կը հաջողի ջնջել տալ անոնց մահապատիժը:

Օրմանյան Պատրիարք 12 տարիներ շրջահայաց վարչագիտությամբ և հմտությամբ հովվեց Հայ ժողովուրդը թուրք իշխանությանց ներքև՝ անոնց կյանքի և ինչքի ապահովությունը պաշտպանելով:

1908 թվին ստիպվեցավ հրաժարիլ իր պատրիարքութենեն՝ շարք մը հայ կուսակցականներու քննադատությանց պատճառով: Իր հրաժարումեն քանի մը ամիս ետք, տեղի ունեցավ Ադանայի ջարդը: Շուրջ 35.000 հայեր նահատակվեցան:

Հիշենք, սակայն, որ Վեր. Վ. Թուրքիկյան Օրմանյան Սրբազանի կենսագրության մեջ ունի նաև արդարացի էջեր: Ան դրվատալից բառերով պանծացուցած է անոր գրական, պատմագրական աշխատասիրությունները:

ԱՅԼ ԱՆՃԻՇՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեր. Վ. Թուրքիկյան լայնորեն անդրադարձած է Քաղկեդոնի մեջ գումարված Քրիստոնեական Դ. Տիեզերական Ժողովի մասին, որ գումարվեցավ 451 թվականին: Հայեր չմասնակցեցան այդ ժողովին, որովհետև պատերազմի մեջ էին: Վարդանանց պատերազմը տեղի կունենար ընդդեմ Հազկերտի՝ ի պաշտպանություն մեր հավատքի:

Քաղկեդոնի այդ ժողովին, Հռովմի Լևոն Պապը ներկայա-

ցուց գրավոր «Տոմար» մը, որ ծանոթ է “Leos Tom” անվան տակ – «Լևոնի Տոմարը»:

Այս «Տոմար»ին մեջ, Լևոն Պապ, Քրիստոսի կը վերագրե երկու զատորոշ բնություններ՝ Աստվածային և Մարդկային: Երբ հրաշք կը կատարեր Հիսուս՝ Աստված էր: Երբ ծարավ էր, ջուր կըմպեր՝ մարդ էր: Երբ խաչվեցավ՝ մարդ էր, երբ հարություն առավ՝ Աստված էր:

Հայաստանյայց Եկեղեցին կը մերժե այս բանաձև և կը նզովե «Լևոնի Տոմար»ը: Մեր Եկեղեցին Քրիստոսի Աստվածային և Մարդկային բնությունները անշփոթ միավորությամբ միացած կընդունի:

Վեր. Վ. Թուլթիկյան կատարյալ շփոթության մեջ է: Մեր Եկեղեցվո վարդապետությունը՝ «Միավորյալ մի բնություն», Լևոն Պապին կը վերագրե:

Կը թվի, որ Վեր. Վ. Թուլթիկյան կատարելապես անծանոթ է Հայ Եկեղեցվո Աստվածաբանության:

Սյունյաց Աշխարհի մեծանուն պատմիչը՝ Ստեփանոս Օրբելյան, ամբողջ հատոր մը ունի գրած «Լևոնի Տոմար»ին դեմ և Քաղկեդոնականության՝ հետևյալ խորագրով. «Հակաճառություն ընդդեմ երկբնակաց»:

Հայ ժողովուրդի այս ականավոր պատմիչին կարևորագույն գործն է «Պատմություն Հայոց Սիսական» երկհատոր պատմագիրքը, ուր գրի առնված է Սյունյաց Աշխարհի լրիվ պատմությունը: Վեր. Վ. Թուլթիկյան տող մը անգամ գրած չէ այս մեծանուն հոգևորականին մասին:

ՆԱՅ ԿԱԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑՎՈ ՄԱՍԻՆ

Վեր. Վ. Թուլթիկյան լայն տեղ հատկացված է Հայ Կաթոլիկ Եկեղեցվո սկզբնավորության և շարք մը հայ կաթոլիկ հոգևորականներու սնուցած անճիշտ հավակնությանց շուրջ:

Ահա՛, թե ինչ կը գրե ան.

«Կան ուսումնականներ, որոնք կը հավատան թե 1831-ը պետք է նկատել որպես սկիզբ այդ հարանվանությունից. կան ուրիշ հայ պատմագիրներ, որ կը հավատան, թե Հայ Կաթողիկե Աթոռը կը սկսի 1742-ին: Դեռ ուրիշներ կը պնդեն, թե կաթողիկոսությունը հայոց մեջ երևան եկավ ժԱ. դառն երկրորդ կեսին ետք... Եվ դեռ կան Հայ կաթողիկոսականներ, որոնք կը ջատագովեն այն տեսակետը, թե իրենց Եկեղեցին 1700 տարվան պատմություն ունի»:

Հոս կան չորս տեսակ տարբեր կարծիքներ: Մեկը մյուսը հերքող կարծիքներ: Առաջին կարծիքը կը հերքե ինքնին մյուս երեք կարծիքները: Ինչ որ ճիշտն է անշուշտ: Վեր. Վ. Թուրթիկյան քաջ գիտե այդ: Եվ գիտե նաև, որ «կըսեն թե»ներով, «ըստ կաթողիկոսականներու» խոսքերով, պատմություն չի գրվիր:

Պատմագրություն հիմնական օրենքը ապացուցանելն է ճիշտը՝ ընդդեմ սխալին, ճշմարտությունը՝ ընդդեմ սուտին: Ա՛յդ է, որ պետք է ըներ ան, և կամ բնավ պետք չէ մխրձվեր միջեկեղեցական տարակարծություններու և վեճերու մեջ:

Վեր. Վ. Թուրթիկյան կը հիշե անունները շարք մը հայ կաթողիկե հոգևորականներու, որոնք Հայաստանյայց Եկեղեցվո դեմ գիր ու գիրք հրատարակած են, ինչպես կարգինալ Աղաջանյանի տխրահոսակ «Թուղթ»ը, Հ. Ս. Կոզյանի «Հայոց Եկեղեցին» գործը, նաև «Ex Apostolic Flame» անունով անձանոթ և անհեղինակ հրատարակություն մը:

Ինչո՞ւ մոռանալ սակայն, այս ստահող հրատարակությանց դեմ գրված գրքերը՝ ինչպես օրինակ, Դերենիկ Եպս. Փոլազյանի «Թուղթ Հերքման» անուն կարևոր աշխատասիրությունը, նաև Եղիշե Պատրիարք Տերտերյանի «Ակամա Անդրադարձումներ» երկը:

Հ. Սահակ Կոզյանի «Հայոց Եկեղեցին» գործը հերյուրանքներու և սուտերու հավաքածու մըն է: Հեղինակը իր ընտրած խորագրով իսկ («Հայոց Եկեղեցին»), իմբզինք դուրս կը

նկատե հայութենե: Հռովմի դավանությունը իրեն համար ազգություն համարող այս կաթոլիկ հոգևորականը, իր հայաբույր «Սահակ Կոզյան» անունը, մեկդի նետած է և Lorenzo Gogy անունը ընտրած է:

Եղիշե Պատրիարք Տերտերյան իր «Ակամա Անդրադարձումներ» գրքին մեջ, մեկ առ մեկ հերքած է Lorenzo Gogy-ի բոլոր ստույգությունները և իր հատու գրիչով գայն վերածած է մարդկային խլյակի մը:

Այս նյութերուն և միջեկեղեցական մեր տարակարծություններուն տեղը չէ Վեր. Վ. Թուլթիկյանի «Դեմքեր և Դեպքեր...» գիրքը:

Վեր. Վ. Թուլթիկյան կատարած է նաև այլ ապշեցուցիչ տարօրինակություն մը: Հռովմեական Կաթոլիկ եկեղեցվո հանդեպ ցուցաբերած է անբնական մերձավորություն մը, որ խոտոր կը համեմատի Բողոքական (Ավետարանական) Եկեղեցվո ըմբռնումներուն և դավանությանց հետ: Վեր. Վ. Թուլթիկյան իր գրքին մեջ քանի տեղ «Տիեզերական Եկեղեցի» անվանած է Հռովմի Կաթոլիկ Եկեղեցին:

Բողոքական Ավետարանական Հարանվանությունը վճռականորեն կը մերժե Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցվո «Տիեզերական Եկեղեցի» լինելությունը:

Վեր. Վ. Թուլթիկյան կրնա ըսել, որ ո՞ւր է «Հայ Բողոքական Ավետարանական Եկեղեցվո» տեղը այդ «Տիեզերական Եկեղեցվո» մեջ:

Կարևորությամբ կուզենք ավելցնել հետևյալը. Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցին, մեջն ըլլալով անշուշտ Հայ Կաթոլիկ Հարանվանությունը, խոտորեն այլամերժ և բացասական տրամադրությոններ ունին լոկ, ընդդեմ Բողոքական Հարանվանության, ներառյալ Հայ Բողոքականության: Ահա թե ինչո՞ւ տարօրինակ կը թվի մեզի Վեր. Վ. Թուլթիկյանի ցուցաբերած մերձավորությունը հանդեպ կաթոլիկ հարանվանության, ներառյալ Հայ Բողոքականության: Ահա թե ինչո՞ւ տարօրինակ

կը թվի մեզի Վեր. Վ. Թուրիկյանի ցուցաբերած մերձավորու-
թյունը հանդեպ կաթոլիկ հարանվանության:

ԿԱՐԵՎՈՐ ՄՈՌԱՅՈՒՄՆԵՐ

Վեր. Վ. Թուրիկյան իր «Կարևոր դեմքեր և Դեպքեր...»
գրքին մեջ մոռցած է հիշել Հայ Եկեղեցվո կարևոր գիտնա-
կաններեն՝ Կարապետ Եպս. Տեր Մկրտչյանը: Կարապետ Եպս.
Տեր Մկրտչյանը եղավ առաջինը, որ լրիվ երևան հանեց «Պավ-
լիկյան», «Թոնդրակյան» և «Մժղնեա» աղանդավորներուն
ամբողջ պատմությունը: Իր այս գործը ան գրած էր գերմա-
ներենով և որ տպվեցավ 1903 թվին՝ Գերմանիո Լայպցիգ
քաղաքին մեջ, ինչ որ շատ գնահատվեցավ գերմանացի պատ-
մաբաններու կողմե: Այս գիրքը գերմաներեն հայերենի թարգ-
մանեց հետագային Պրոֆ. Արտաշես Աբեղյանը 1936 թվին:
Կարապետ Սրբազան եղավ առաջին հայ գիտնականը, որ
երևան հանեց մեկ քանի օտար պատմիչներու գործեր, որոնք
կորսված կը թվեին ըլլալ:

Եվսերիոս՝ Քրիստոնեության առաջին պատմիչի գրքին մեջ
հիշատակած է այլ հույն քրիստոնյա պատմիչի մը անունն ու
գործը՝ (Ս. Իրինիասի (Երանոս) «Յուլյցք Առաքելական Քա-
րոզության»):

Այս գրքի բնագիրը կորսված էր: Բայց մեր Ոսկեդարու
պատմիչները հայերենի թարգմանած էին գայն: Այդ թարգ-
մանությունն է, որ գտավ Կարապետ Եպս. Տեր Մկրտչյան և
թարգմանեց գայն գերմաներենի: Նման գործ մըն էր նաև Տի-
մոթեոս Կուզի գործը (Ասորի պատմիչ): Այս գործերու հրա-
տարակությունը պատճառ եղավ, որ այդ գործերը թարգման-
վին շատ մը ուրիշ լեզուներու, որոնք միջազգային պատմիչ-
ներու կողմե բարձրորեն գնահատվեցան:

Կարապետ Եպս. Տեր Մկրտչյանի մասին շատ ընդարձակ
ուսումնասիրություն մը ունի Գարեգին Ա. Կաթողիկոս Հով-
սեփյանց, Ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրին մեջ:

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՆԱՅՈՑ»

Այս գիրքը կը պարունակէ Հայ ժողովուրդի ընկերային, քաղաքական, իրավական (օրենսդրական) կարգով ապրելու կանոնները:

Այս կանոնադրութիւնները պատրաստված և հաստատված են Հայաստանյայց Եկեղեցւո մեծանուն կաթողիկոսներու և հոգևորականներու կողմէ:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եղած է առաջինը, որ դրած է շարք մը կարևոր կանոններ: Նույնը ըրած է նաև Սահակ Պարթև կաթողիկոսը, և Հովհաննէս Մանդակունի Հայրապետը Ե. դար:

7-րդ դարու մեր Հովհաններ Օձնեցի կաթողիկոսը պատրաստած է շարք մը կարևոր կանոններ:

Հայաստանյայց Եկեղեցւո կաթողիկոս և հոգևորական դասը՝ հավաքաբար, գումարած են շատ մը օրենսդրական ժողովներ և մեր ժողովուրդի օրինապահութեան և բարօրութեան համար պատրաստած են կանոններ: Հիշենք այդ ժողովներէն մեկ քանին. Շահապիվանի ժողով՝ 5-րդ դար. Սիսի ժողով՝ 1243 թվին. Զագավանի ժողով՝ 1268 թվին:

Մեր շարք մը իմաստուն կաթողիկոսներու և մեր եկեղեցւո տեսաբան եկեղեցականներու պատրաստած կանոններով է, որ մեր ժողովուրդը ամբողջ 17 դարեր ապրած է մեր հայրենի հողերու վրա՝ առանց ներքին վեճերու:

«Հայոց Եկեղեցու Իրավունքը»: Այս է խորագիրը այս կարևոր երկասիրութեան, որ առաջին անգամ 1903 թվին լույս ընծայեց Ներսէս Արք. Մելիք-Թանգեյանը (երկարամյա առաջնորդը Ատրպատականի թեմին), որ կը պարունակէ մեր «Կանոնագիրքը»:

Նույն կանոնագիրքը ավելի մանրամասնեալ և ընդարձակ կերպով լույս տեսավ Հայաստանի մեջ «Վազգեն Հակոբեյան» անուն հայ գիտնականի կողմէ, «Կանոնագիրք Հայոց» անվան տակ: Ավելի քան 750 էջերու վրա ներկայացված այս կանոն-

նագրքի պատրաստության մեջ, իրենց մասնակցությունը ունեցած են նաև Հ. Ս. Անսյան և էմ. Ա. Պիվազյան:

Մելիք-Թանգյան Սրբազան՝ «Հայոց Եկեղեցվո իրավունքը» անվանած է այս կանոնագիրքը, որովհետև «Հայոց Եկեղեցվո իրավունքն» է այս կանոնագրքի պատրաստության և գործադրության փառքն ու պատիվը: Այս կարևոր գործի և Մելիք-Թանգյան Սրբազանի մասին տող մը անգամ չկա «Դեմքեր և Դեպքեր» գրքի մեջ:

ՎԵՐ. ԹՈՒԹԻԿՅԱՆ ԵՎ ՆԱՅԱՍԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Վեր. Վ. Թուֆիկյան քառասուն տարիներ և ավելի ծառայած է Հայ Ավետարանական (Բողոքական) Եկեղեցվո: Ան հոգևոր հովվության պաշտոններ վարած է Դամասկոսի, Կահիրեի, Բոսթոնի և Դիտրոյիդի Հայ (Բողոքական) Ավետարանական եկեղեցիներու մեջ:

Որպես հոգևոր հովիվ ան սիրված և հարգված է, ոչ թե լոկ իր Ավետարանական համայնքեն, այլ նաև՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո հավատացյալներեն, որովհետև ան իր պաշտոնավարության շրջանին երբեք չէ մտած միջ-հարանվանական տարակարծությանց և վեճերու մեջ: Ընդհակառակը՝ ան միշտ ալ վեր մնացած է նման վեճերե և հարգալիր վերաբերմունք ցուցաբերած է՝ հանդես «Մայր Եկեղեցվո», Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո:

Ան 1992 թվին, իր գրած մեկ գիրով, հայտարարած է նույնիսկ, որ Հայաստանյայց Եկեղեցին կը նկատե որպես «Մայր Եկեղեցի» և թե իր «իղճն է, միություն Մայր Եկեղեցվո հետ, ինչպես միություն՝ մայր և որդի միջև»:

Այն օրեն, սակայն, երբ Վեր. Վ. Թուֆիկյան եղավ նախագահը AMAA-ի, ան մեկեն դարձավ հոգեփոխ:

«Մայր և որդի» սրտառուչ տողերու հեղինակը՝ փորձ մը ըրավ բռնաբարելու Հայաստանյայց Եկեղեցվո անուններն ու

իրավասությունները: Հետագային, սակայն, իմաստուն գտնվեցավ կեցնելու իր այդ անիրավ արարքը:

Իր «Դեմքեր և Դեպքեր...» գրքի մեջ ևս, ան ունի շատ պատշաճ ուղղամիտ և արդար գնահատություններ հանդեսս («Մայր Եկեղեցվո») Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո: Տարաբախտաբար, ունի նաև էջեր, ուր ճիշտ հակառակը՝ հոն գետեղված են անճիշտ և անարգ ստույթյուններ:

Խոսինք օրինակներով: Էջ 7-ի մեջ կը գրե.

«Քրիստոսի երկու Առաքյալները՝ Թադեոս և Բարդուղիմեոս, Ավետարանչական ջանքերով... գացին Հայաստան և հիմը դրին Քրիստոսի Եկեղեցիին: Իրենցմե շուրջ երկուք և կես դար ետք Ս. Գրիգոր Լուսավորիչ Քրիստոսի լույսը տարածեց Հայաստանի մեջ»:

«Հայ Եկեղեցին եղավ ամենեն զորավոր ազգակը Հայ Ազգային քաղաքակրթության: Հայ Եկեղեցին օտեսց Հայ Ազգը իր ուրույն նշանագրերով և մեր ազգային գոյությունը մշտնջենավորվեցավ: Շնորհիվ Հայ այբուբենին զարգացավ և ճոխացավ Հայ գրականությունը և դպրությունը և ոսկեդարը»:

«Հայ Եկեղեցին նաև եղավ հզոր ազգակ մը, Հայ ազգային քաղաքական կյանքի ղեկավարման մեջ: Երբ պետություն ունեինք, ան գործեց պետության հետ ձեռք ձեռքի: Իսկ երբ պետականությունը կորսնցուցինք, ան ստանձնեց Հայ ժողովուրդի հոգատարությունը աշխարհի չորս ծագերուն...:

Կարելի՞ է երևակայել, որ նման պարկեշտ, արդարադատ և պատմականորեն ճիշտ տողերու հեղինակ մը, որպիսին է Վեր. Վ. Թութիկյան, կրնա իր նույն գրքին մեջ գետեղել հետագա ստահող և անպարկեշտ տողերը:

«Կաթողիկե ուսումնականներ նույնիսկ վկայություն կը բերեն առաքելական մտավորականներ հաղորդելու, թե Թադեոսի Հայաստանում քարոզելը և այստեղ նահատակվելը շինծու են»:

Անուն չունի՞ն այդ «չինծու ուսումնականները» և «չինծու մտավորականները»: Վեր. Վ. Թուրիկյան անհարմար չզգար նման սխալներով լի նախադասություն մը գետեղելով իր գրքին մեջ և՛ աններելի սուտ մը:

Տանք այլ օրինակ մը. «Հայ Բողոքական (Ավետարանական) Եկեղեցվո» ծագման մասին գրված: Վեր. Վ. Թուրիկյան Թուրիկաբար կը կրկնե Վեր. Վ. Տարագճյանի հերյուրած ստույթյունները, որոնք ատենին մեկ առ մեկ հերքած ենք մենք (տե՛ս «Հայաստանյայց Եկեղեցին և Մյուսները», էջ 28): Այդ ստույթյուններեն զատ, «Դեմքեր և Դեպքեր...» գրքին մեջ կա այլ աններելի ստույթյուն մը, որ ահավասիկ.

«...1836 թվին - Բարեպաշտական Միություն - անուն միություն մը կազմված էր, որոնց միտումը՝ Հայ Առաքելական Եկեղեցիին բարեկարգել և մաքրել էր իր ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆՆԵՐԵՆ (ընդգծումը մեր կողմե է): Այս միությունը սկիզբ պետք է նկատել «Հայ Ավետարանականություն»:

Ինչպիսի՞ «ավետարանական» կրնա անվանվիլ այն ստորին արարածը, որ իր կոտորովելիք մատներովը, գրեր է այս սրբապղծությունը. և Աստուծո Տունը՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, «ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ» վայր կոչեր է:

Ինչպիսի՞ հայ մարդ կրնա նկատվիլ այն աննկարագիր թշվառականը, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որ Տունն է Աստուծո, և տունն է Հայ հոգիին՝ «ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ» վայր կանվանե:

Այս խոսքը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ «Հայհոյություն մը ընդդեմ Ս. Հոգվո», ինչպես պիտի ըսեր Քրիստոս:

Տարակույս չունինք, որ վերոհիշյալ սրբապղծության հեղինակը Վեր. Վ. Թուրիկյանը չէ: Կը կարծենք նաև, որ իր գրքին մեջ տեղ գտած բազմապիսի սուտերուն ալ հեղինակը՝ ինքը չէ: Եվ, սակայն, Վեր. Վ. Թուրիկյան բնավ թույլ պետք չէ տար, որ նման սրբապղծություններ և սուտեր տեղ գտնեին իր գրքեն ներս:

Մեզի համար դժվար է կռահել, որ իրապես ո՞վ է հեղինակը այս գարշելի սրբապղծության, և գրքին մեջ գետեղված կոթողական ստույթյանց:

«Ապականություն»ը կը գտնվի հոգիներուն մեջ բոլոր անոնց, որոնք սուտերով, հերյուրանքներով փորձած են նենգափոխել Հայ ժողովուրդի և Հայ եկեղեցվո ճշգրիտ պատմությունը: Ապշեցուցիչ է անշուշտ, որ այսպիսիները «ուսումնականներ» ալ հորջորջվեր են:

Ասո՛նց համար է, որ Սյունյաց աշխարհի մեր մեծանուն պատմաբանը՝ Ստեփանոս Օրբելյան գրած է հետևյալը.

— «Յամենայն ժամ ուսանին, և ի լոյս

Աստուածագիտութեան ոչ հասանին»:

«Ամեն ժամ կուսանին, բայց Աստվածագիտության լույսին երբեք չեն հասնիր»:

A

«ԲԱՑ ԿԱՄԱԿ»Ի ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Վեր. Վ. Թուլթիկյանի լույս ընծայած «Դեպքեր և Դեմքեր Հայ քրիստոնեությունից պատմություն մեջ» գրքին մասին մի գրած գրախոսականիս դեմ պատասխան մըն է վերոհիշյալ «Բաց նամակ»ը, որ Վեր. Վ. Թուլթիկյան հրատարակած է Կանադահայ Առաջնորդարանի պատկան «Լույս» երկամսազրի 5 և 6 թիվերուն մեջ, ուր նախապես լույս տեսած էր նաև իմ գրախոսականս:

Վեր. Վ. Թուլթիկյան իր «Բաց նամակ»ը կը սկսի սա տեսակ բառերով. «Հոգվածագիր Թորգոմ Փոստաջյան առաջին անգամ չէ, որ «Գրախոսական»ի պիտակին տակ, կամ այլ պատճառներով կաշխատի իր ներսիզին ամբարած մաղձն ու թույնը թափել անձերու և հարանվանությունց վրա, որոնց հանդեպ կարծես բնագրական ատելություն ունի»:

Հստակ ընենք նախ, որ ես ոչ մեկ «բազդական ատելություն» ունիմ, այլ «հարանվանությունց դեմ», և ոչ ալ «անձերու» դեմ:

Վեր. Վ. Թուլթիկյան պետք է քաջ գիտենա, որ իր վերոհիշյալ արտահայտությունը հիմնովին անճիշտ է, որովհետև հատկապես ինք շատ լավ գիտե, որ իմ բոլոր հոգվածներուս մեջ միշտ հարգալիր բառերով արտահայտած եմ իր անձին մասին, որպես նվիրյալ և սիրված Հայ Ավետարանական հոգևորական մը:

Ինք քաջ գիտե նաև, որ միջհարանվանական հարցերու շուրջ իմ գրած հոգվածներուս մեջ կարևորությունը չեղած

եմ միշտ, որ իմ քննադատություններս ուղղված չեն Հայ Կաթողիկե (կաթոլիկ) և Հայ Ավետարանական (բողոքական) Հարանվանությունց դեմ, և ոչ ալ Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական հավատացյալներու դեմ:

Ավելի քան հարյուր հիսուն տարիներե ի վեր վերոհիշյալ Հարանվանությունները հաստատված են հայ ժողովուրդի մեջ և ստեղծած են իրենց ենթակա համայնքներ:

Ես միշտ ալ անվերապահորեն շեշտած եմ, որ հայ կաթողիկեներ և հայ ավետարանականներ մեր հայ ազգի զավակներ են, մեր եղբայրներն ու քույրերն են և իրենց մեջ ալ կան օրինակելի և նվիրյալ հայրենասերներ:

Հակառակ մի այս անկողմնակալ և պարկեշտ վերաբերմունքիս, Վեր. Վ. Թուրիկյանի վերևի հայհոյալից վերագրումը, որ իբրև թե ես «ներսիդիս ամբարած եմ մաղձ և թուլյն, մեր մյուս հարանվանությունց» դեմ, աններելի ստույգուն մըն է:

«Մաղձն ու թուլյնը» կը գտնվի հատկապես անոնց «ներսիդիս», որոնք անիրավորեն նման անբաստանություն կը կատարեն ինձի դեմ:

Իմ քննադատություններս ուղղված են միայն այն անհատներու և հոգևորականներու դեմ, որոնք կը փորձեն նենգափոխել Հայաստանյայց Եկեղեցվո պատմությունը և կամ աններելի ոտնձգություններ կը կատարեն Հայ Եկեղեցվո իրավասություններեն ներս:

Վեր. Վ. Թուրիկյան կատարած է նաև այլ կարգի անվանարկություններ անձիս դեմ հետևյալ բառացուցումներով... Ես իբրև թե «կը գործածեմ նախատական լեզու»: Ան կը գրե, որ ես ունիմ «այլամերժ ոգի», և թե կը կատարեմ «ցեխարձակումներ» և «անհիմն զրպարտություններ. իմ քննադատություններս կը գրեմ եղեր «խտրական և նախապաշարյալ մտքով», իմ գրվածքներս լեցուն են «անհիմն վարկածներով»: «Այլատյաց եմ աղեր և այլամերժ», կը կատարեմ

«փուլթկոտ դատումներ»։ «Կիրքով և մաղձով» լեցուն են եղեր գրվածքներս, և դեռ «անազնիվ» եմ եղեր և «անբարեկիրթ»։ Ան ինձի կը վերագրես նաև «սառնարյուն առարկայականություն», որուն իմաստը վստահ եմ, որ ինք անգամ չի գիտեր, կավելցնես ա՛յլ անիմաստ նախադասություն մը. կը գրես, որ «իրավ պատմագիրը իր գործին մեջ չի մտցնել իր անձնական օրակարգը» (agenda)։

Վեր. Վ. Թուրիկյան շատ ավելի լավ կընեն, եթե կարենար իմ գրախոսականիս մեջ ցույց տալ մեկ տող, ուր «անհիմն գրպարտություն» մը ըրած ըլլամ իրեն դեմ։

Վեր. Վ. Թուրիկյանի՝ անձիս դեմ կատարած վերոհիշյալ անվանարկությունները կը հաստատեն նկարագիր մը, որ հոգևորական իր հանգամանքին հետ խոտոր կը համեմատի։

ԿԱՍԿԱԾԱՄՏՈՒԹՅՈՒՆ

«Դեպքեր և Դեմքեր...» գրքի մասին շարք մը հայ թերթերու մեջ հոգևած մը երևցավ ատենին, ուր դրվատիքը կըլլար գրքին։ «Կոթողական գործ» կանվանվեր այն և կը փառաբանվեր հեղինակը՝ Վեր. Վ. Թուրիկյան։ Այս հոգևածին տակ ստորագրություն չկար։ Կար միայն «Հայկական Ժառանգություն» հանձնախումբը՝ անունը։ Այս հանձնախումբին միակ գործունեությունը եղած էր հրատարակել Վեր. Վ. Թուրիկյանի ավելի քան 20 հատոր գրքերը։

Մեր նկատողությունը եղած էր ա՛յն, որ այդ դրվատալից հոգևածին ներքև անձի մը ստորագրությունը պետք էր ըլլար, որպեսզի չենթադրվի, թե հոգևածին հեղինակն ալ Վեր. Վ. Թուրիկյանն է։

Մեր այս դիտողության համար կասկածամտություն վերագրված էր ինձի, և որպես լուսաբանություն՝ Վեր. Վ. Թուրիկյան կը գրես, որ երեք (անանուն) անձեր երեք հոգևածներ

գրեր են եղեր գրքի հրատարակության վաղորդային: Այդ երեք հոդվածներու «համախմբումն և խմբագրված ամփոփ վկայությունն» է եղեր մամուլի մեջ երևցածը:

Հարցում – Ինչո՞ւ անուն չունին այդ երեք հոդվածագիրները: Ինչո՞ւ այդ հոդվածագիրները իրենց սեփական ստորագրություններով մամուլին չեն ղրկած իրենց հոդվածները;

Ինչո՞ւ անունը չէ տրված այն անձին, որ «համախմբեց» և «խմբագրեց» այդ երեք հոդվածները:

Այս հարցումները կապացուցանեն, որ Վեր. Վ. Թուլթիկյանի տված լուսաբանությունը հեռու է լուսաբանությունը ըլլալե, իր իսկ բառերով՝ «չինծու» է, և առիթ կընծայե «կասկածամտություն»:

ՎԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑՎՈ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԴԵՄ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Վեր. Վ. Թուլթիկյան 1992 թվին «Ասպարեզ» օրաթերթի մեջ առաջին ոտնձգության փորձ մը ըրավ ընդդեմ Հայ Եկեղեցվո անուններու: Ան գտած էր, որ Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական հարանվանությունները ևս իրավունք ունենին «Հայաստանյայց Եկեղեցի» և «Հայ Եկեղեցի» կոչվելու: Վերոհիշյալ հոդվածին դեմ զույգ հոդվածներ գրեց Դոկտոր Հակոբ Ներսոյան, որ փաստացի տվյալներով ապացուցանեց, որ այդ անունները կը պատկանին ՄԻԱՅՆ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո: Հարցը փակվեցավ: Եվ սակայն շուրջ տասը տարիներ ետք, Վեր. Վ. Թուլթիկյան նոր հոդվածով մը հրապարակ իջավ, կրկնելով նույն հանգերգը, թե Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիները ևս իրավունք ունին կոչվելու «Հայ Եկեղեցի» և կամ «Հայաստանյայց Եկեղեցի»:

Ան նույնիսկ հայտարարեց, որ Հայոց Քրիստոնեութան դարձի 1700 ամյակը Հայաստանյայց Եկեղեցվո մենաշնորհը է:

Այս նյութի շուրջ իմ գրած հոդվածս՝ «Հայաստանյայց Եկեղեցվո անունները աճուրդի հանված չեն», մեծ ընդունելություն արժանացավ: Բազմաթիվ նամակներ և հեռաձայներ ստացանք: Նույն հոդվածը որպես բոլորը լույս ընխայվեցավ Հայաստանի մեջ՝ տասը հազար օրինակով և ցրվեցավ մեր հավատացյալ ժողովուրդին ի Հայաստան:

Վեր. Վ. Թուրքիայան գործի լծե իրեն ենթակա երեք արբանյակներ, որոնք հրապարակ իջան մամուլով անձնապես ինձի դեմ: Անոնք չմնաց հայհոյություն, և չարախոսություն, որ չընեն ինձն դեմ:

Անոնք իրենց արժանավայել պատասխանը ստացան անշուշտ:

Վեր. Վ. Թուրքիայան իր այս նամակին մեջ վերստին կարծարծե Հայաստանյայց Եկեղեցվո անունները կապտելու իր համառությունը: Կը գրե, որ իբրև թե 1846 թվի Հուլիսին ինը ամերիկացի և երկու սկովտացի բողոքական միսիոնարներ հարց տված են առաջին հայ բողոքական «միաբանություն» մը, թե «ո՞ր հարանվանության կուզեք հարիլ», և անոնք պատասխանած են իբրև թե հետևյալ ձևով. «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի կուզենք կազմել»:

Վեր. Վ. Թուրքիայան կը գրե, որ այս տեղեկությունները ինք քաղած են Ստեփան Յուլյուշյանը, այլ պատվելի Աբիսողոմ Յուլյուշյանը: Այս համայնքի անդամները, գլխավորությամբ Պատվելի Աբիսողոմ Յուլյուշյանի որոշեցին կոչիլ «Առաջին Ավետարանական Եկեղեցի Կոստանդնուպոլսո»:

Հետագային, ամերիկյան և անգլիական դեսպանատուներու միջնորդությամբ Թուրքիո կառավարությունը 1847 թվի Հոկտեմբեր 3-ին թույլատրեց կազմությունը առաջին Հայ Բողոքական համայնքին՝ «Բրոթեսթան Միլլեթի» անվան տակ:

Հայ Ավետարանականներու առաջին պատվելի Աբիսողոմ Յուլիուշյանի մահվընեն ետք, Հայ Ավետարանական Համայնքի պատվելի նշանակվեցավ Ստ. Յուլիուշյանը: Այս վերջինը մահացավ 1992 թվին:

Վեր. Ստ. Յուլիուշյան Հայ Ավետարանական Համայնքի կազմության մասին ունի եղեր հուշեր, որոնք 1911-ին (ոչ թե 1914-ին) խմբագրեց և հրատարակեց Վեր. Ա. Շմավոնյանը՝ «Ծրագրումն և ընթացք Ավետարանականությանս ի Հայս» խորագրով:

Նույնիսկ թե այդ գրքի մեջ գրված ալ ըլլա «Հայաստանյայց Ավետարանականություն» բառը, ինչպես կը հիշե Վեր. Վ. Թուրիկյան, այդ չապացուցաներ երբեք, որ Հայ Ավետարանական Եկեղեցին իրավունք ունի «Հայաստանյայց Եկեղեցի» կոչվելու:

«Հայ Ավետարանականներու» ճշմարիտ անունը եղած է «Բրոթեստան Միլլեթ»ի, կամ «Հայ Բողոքական Եկեղեցի» և կամ «Հայ Ավետարանական Եկեղեցի» և պրծավ:

Ուրեմն վերջ այլևս այս ծիծաղելի իմաստակության:

ԱՅԼ ՓՅՈՒՆ ԵՎ ԱՆԻՄԱՍ ՈՏՆՉԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Վեր. Վ. Թուրիկյան վերջերս մամուլով և բեմերու վրայեն, իր կինը կը ներկայացնե որպես «երեցկին»:

Ավանդաբար, Հայ Եկեղեցվո քահանաներու կիներուն է, որ վերապահված «երեցկին» բացատրությունը, որովհետև Հայաստանյայց Եկեղեցվո մեջ «երեց»ը հոմանիշ է «քահանա» բառին, ինչպես՝ Ղևոնդ Երեց:

Վեր. Վ. Թուրիկյան չունի քահանայական կարգ և իրավունք չունի միայն Հայ քահանաներու կիներուն վերապահված «երեցկին» անունով ներկայացնելու իր կինը: Ինք միթե չի գիտե՞ր այս:

Այս փցունն ոտնձգութիւնը չէինք ուզեր նյութ ընել, եթէ ինք չչարունակեր Հայ Եկեղեցւոյ անունները կապտելու իր համառութիւնը:

ՆԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑՎՈ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վեր. Վ. Թուրիկյան իր բաց նամակի մեջ վերստին կը փորձէ կասկածի տակ դնել Հայ Եկեղեցւոյ Առաքելական ծագումը: Կը գրէ. «Փոստաջան չի հավատար, որ օտար պատմիչներու (անանուն) կողքին կան նաև հայ պատմաբաններ, որոնք կը մերժեն Հայ Եկեղեցւոյ Առաքելական Ծագումը» և կու տա անունները այդ հայ պատմաբաններուն՝ «Ստեփանոս Մալխասյանց, Մ. Գարագաշյան և Մանուկ Աբեղյան»:

Այո՛, ես չեմ հավատար, որ այդ անանունն օտար պատմիչներ և մեծանուն ակադեմիկոս գիտնական պատմաբաններ, Ստեփանոս Մալխասյանց և Մանուկ Աբեղյան կը մերժեն Հայ Եկեղեցւոյ Առաքելական ծագումը, ինչպէս կը փորձէ վկայել Վեր. Վ. Թուրիկյան հիշելով նույնիսկ անոնց այն գրքերը և էջերը, ուր իբրև թէ անոնք «կը մերժեն Հայ Եկեղեցւոյ առաքելական ծագումը»:

Այս գիտնական պատմաբանները ոչ թէ կը մերժեն Հայ Եկեղեցւոյ Առաքելական ծագումը, այլ ընդհակառակը, կը հավատան և կապացուցանեն Հայաստանյայց Եկեղեցւոյ Առաքելական ծագումին:

ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Վեր. Վ. Թուրիկյան կը մեղանչե՛ կատարելով աններելի սուտ վկայութիւն մը մեր վերոհիշյալ մեծանուն պատմիչներու մասին:

Հարց է գիտեալ, թե ի՞նչպես ան թույլ տված է ինքզինքին, կատարել նման մեղանչում մը՝ հակառակ իր կրոնավորի հանգամանքին:

Ինք չի՞ գիտեր միթե «Տասը Պատվիրանները»:

«Սուտ վկայություն մի՛ ըներ»:

Մենք պիտի բավականանք հոս ներկայացնելով լուկ հակիրճ երկու հատվածներ ակադեմիկոս-բանասեր Մանուկ Աբեղյանի «Հայոց Հին Գրականություն Պատուխան» գրքի «Վկայաբանություն» պարբերություններ, ուր անվանի գիտնականը կապացուցանե Թադեոս և Բարդուղիմեոս Առաքյալներու քարոզությունն ու նահատակությունը Հայաստանի մեջ: Ահավասիկ ...

«Փափստոսը (Փափստոս Բյուզանդ Դ. և Ե. դարու մատենագիր) գրում է. Թադեոս Առաքյալի քարոզությունն ու նահատակությունը Հայաստանում, ապա Ագաթանգեղոսի Պատմությունը: Կը նշանակի՝ այդ ժամանակ արդեն եղել է Թադեոսի վկայաբանության հիշատակարանը, ըստ որի Հայոց Եկեղեցվո հիմնադիր է Թադեոս Առաքյալը»:

«Մովսես Խորենացին էլ (մեր Պատմահայրը, Ե. դար) Հայոց Հայրապետական Աթոռն անվանում է «Աթոռ Սրբոյ Առաքելոյն Թադէոսի»: Ապա Բարդուղիմեոսը, ըստ իր վկայաբանության, Հայաստան գալիս է ոչ Եդեսիայից, այլ Հնդկաց, Պարթևաց, Մարաց կողմերում քարոզելուց հետո...»: Նույնը կը վկայե նաև գիտնական Ստեփանոս Մալխասյանցը:

Մեր համոզումն է, որ Վեր. Վ. Թուրիկյան չէ իսկ կարգացած մեր այս մեծանուն պատմաբաններուն գործերը, չէ կարգացած քրիստոնեության առաջին պատմիչ Եվսեբիոսի Պատմությունը: Եվսեբիոս իր Պատմության մեջ հիշած է Թադեոս Առաքյալի Հայաստան կատարած քարոզությունը: Չենք կարծեր, որ Վեր. Վ. Թուրիկյան կարգացած է Փափստոս Բյուզանդի, Ագաթանգեղոսի, Սեբեոսի պատմական գրքերը և Սոփերք Հակականքի Վկայաբանությունները (Ը. դար):

Եթե Վեր. Վ. Թուլթիկյան իր «Դեպքեր և Դեմքեր» գրքին մեջ անվերապահորեն կը հայտարարե, որ ինք «իրոք կը հավատա Հայ Եկեղեցվո Առաքելական ծագումին»: Եթե այդպես է, ինչպե՞ս ան թույլ կու տա ինքզինքին՝ իր հավատքն ու համոզումը ժխտող նման ստույթուն մը տեղավորել իր հոգվածին և իր գրքին մեջ:

ՎԵՐ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՅԱՆՆԵՐԸ

Վեր. Վ. Թուլթիկյան կը փորձե պաշտպանել կարգինալ Աղաջանյանի տարիներ առաջ հրատարակած տխրահույս «Թուլթի»-ը Հայ Եկեղեցու դեմ, որուն դեմ ամբողջ հայուկթունը ծառացալ: Ան կը փորձե նաև պաշտպանել Lorenzo Gogie-ի՝ հայ կաթողիկե եպիսկոպոս Սահակ Կոզյանի՝ «Հայոց Եկեղեցին» անուն նախատալից գիրքը, որ արատ մըն է նետված հայ ազգին ճակտին:

Վեր. Վ. Թուլթիկյան կը փորձե նսեմացնել զիս, որ քննադատած եմ Վեր. Պ. Տարագճյանը, որ երկու այլ համախոհներով երկու կամ երեք տարիներ առաջ զգվելի հայհոյուկթուններ հրատարակեց ինձի դեմ: Ան նաև պարսավ մը գրեց Հայ Եկեղեցվո դեմ, ուր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սիրաբանուկթուն ընողի սրբապիղծ դերին մեջ զնել փորձեց:

Վեր. Վ. Թուլթիկյան իր բավ նամակին մեջ կը փորձե շարունակ անհատը և անոր արարքը նույնացնել: Ես անհատներու դեմ չեմ: Այլ անհատներու կատարած սխալ արարքներու դեմ եմ: Կը թվի, թե այս տարրական ճշմարտուկթունը հասկանալու ի վիճակի չէ Վեր. Վ. Թուլթիկյան:

«ԱՊԱԿԱՆՈՒԹՅԱՆՅ» ՆԵՂԻՆԱԿԸ

Իր «Դեպքեր և Դեմքեր...» գրքին մեջ Վեր. Վ. Թուլթիկյան գրած էր հետևյալը. «1836 թվին Բարեպաշտական Միուկթուն

մը կազմված էր, որուն միտումն եղավ Հայ Առաքելական Եկեղեցին բարեկարգել և մաքրել իր ապակաճություններն: Այս Միությունը սկիզբ պետք է նկատել Հայ Ավետարանականության»:

Իր «Բաց նամակ»ին մեջ, Վեր. Վ. Թուրիկյան կը գրե հետևյալը. «Իմ գրքիս մեջ բառ առ բառ գրած էի հետևյալը. Բարեկարգիչները դարձան նաև քննադատները Հայ եկեղեցիին և Հայ կղերականության: Անոնք այն աստիճան քննադատեցին Հայ եկեղեցիին Աստվածաբանությունը, ծեսն ու արարողությունները, որ նույնիսկ ամբաստանեցին... և պնդեցին, թե եկեղեցին պետք է մաքրվեր իր ապակաճություններն »:

Վեր. Վ. Թուրիկյան չի^օ տեսներ միթե, որ իր գրքին մեջ գրվածը և այս նորգրվածքները «բառ առ բառ» նույնը չեն:

Առաջինին մեջ «բարեպաշտական» անվանված է միությունը, իսկ երկրորդին մեջ «բարեկարգիչներ» կոչվեր են:

Ճշգրիտ պատմությունը, սակայն, հետևյալն է, որ առնված է 19-րդ դարու կեսերուն ապրած Հայաստուն մոլեռանդ բողոքական Leon Arpi անունով անձի մը գրքեն, որուն խորագիրն է “The Armenian Awakening”: Անգլերենով խմբագրված այս գրքի երկրորդ մասի վերնագիրն է “Protestant Armenian Church”:

Լևոն Արփի կոչեցյալը իր այս գրքին մեջ մեծ նախատինքով կարտահայտվի Հայ Եկեղեցվո մասին: Ան կը խժբժե Հայ Եկեղեցվո Աստվածաբանությունը, կը ծաղրե մեր եկեղեցական դասը, կը հեզնե Հայաստանյայց Եկեղեցվո Ս. Պատարագը, կանարգե մեր ծեսերն ու մեր սուրբ խորհրդակատարությունները:

Այս «բարեկարգիչ» կոչեցյալներեն են, որ պահանջեր են Հայաստանյայց Եկեղեցին մաքրել իր «Ապակաճություններն»:

Վեր. Վ. Թուրիկյան իր գրքին մեջ կընդունի վերև ըսվածներուն մեծ մասը և կը պարծենա նույնիսկ, որ այս «բարեկարգիչները» եղած են սկզբնական «Հայ ավետարանական»

ները»: Ցավալի է, նաև, որ Վեր. Վ. Թուլթիկյան կարգարացնե անոնց Հայաստանյայց եկեղեցվո վերագրված «ապականութ- յունները»:

Ահա իր արգարացման փաստարկությունը. «Ամեն եկեղեցի, կը գրե ան, Առաքելական ըլլա թե Ավետարանական և կամ Կաթողիկե, ունի իր թերությունները և զանցառությունները և մեղքերը ...»: Չենք շարունակեր, որովհետև այս ըսվածներ հայհոյություններ են ընդդեմ Ս. Եկեղեցվո և ընդդեմ Աստու- ծո:

– Հոս կանգ ա՛ն , Վերապատվելի... Քրիստոսի Եկեղեցին «մարդկային հաստատություն» է: Քրիստոսի Եկեղեցին Մի՛ է և Սուրբ է:

Այդ «Մի և Սուրբ Եկեղեցին» մաս մը կազմե Հայաստան- յայց Առաքելական Եկեղեցին: Այդ «Մի և Սուրբ Եկեղեցիին» մաս կը կազմե Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին, Հուլյն Օր- թոդոքս Եկեղեցին, Ասորի և Ղպտի Եկեղեցիները և այլն:

Քրիստոսի այս «Մի և Սուրբ» եկեղեցիները չունին «մեղ- քեր», չունին «ապականություններ»:

Վեր. Վ. Թուլթիկյան թող այս «մեղքերն» ու «ապականութ- յունները» փնտրե այլ տեղ:

Վեր. Վ. Թուլթիկյանի «Դեպքեր և Դեմքեր...» գրքի մասին իմ գրախոսականիս դեմ՝ իր գրած «Բաց նամակը»ը կը պա- րունակե 18 ենթախորագրերով հատվածներ, որոնց կարևոր մեկ մասը անվանակություններ են անձիս դեմ, մնացյալները հերյուրանքներ են, անչճտություններ են և՛ սուտեր:

Անոնց կարևորները մենք հերքած ենք հոս: Առ այժմ կը բավականանք այսքանով:

Վեր. Վ. Թուլթիկյան և իր հետևորդները չեն կրցած ըմբռ- նել, որ մեր սկզբնական տարակարծությունը և անոր հետևող վեճը՝ անձնական վեճ մը էջր, և տրամաբանական երկխոսութ- յամբ կրնար հարթվիլ: Բայց Վեր. Վ. Թուլթիկյան գործի լծեց երեք հետևորդներ, որոնք ամենեն անարգ պայքար մը չչղթա-

յազերծեցին ինձի դեմ անձնապես՝ լի հայհոյություններով, անվանարկություններով և այլն:

Վեր. Վ. Թուֆիկյան իր «եզրակացություն» ենթախորագրյալ վերջաբանին ներքև էլ մոռցած շարք մը այլ անվանարկություններ ևս կատարելու ինձի դեմ՝ հետևյալ ստորագելիներով. «նախապաշարումի ախտ», «ջլատիչ ոգի», «ժանտախտի նման», «հատվածական մոլեգնություն», «այլատյաց և այլամերժ ոգի», «չարիքի աղբյուր»...

Եվ ամեն մեղքիս վրա՝ «կոչ համագործակցության»: Այս կոչը լրջությամբ գրված ըլլալով հանդերձ՝ ունի երգիծական իմաստ:

Մենք մեր բոլոր հոգվածներուն մեջ միշտ հարգալիբ բառերով արտահայտված ենք Վեր. Վ. Թուֆիկյանի մասին, հիմնվելով Հայաստանյայց Եկեղեցվո նկատամբ իր ուղղամիտ արտահայտություններուն վրա, և ինք իր գրքին մեջ խոստովանած է այդ:

Հայց. Եկեղեցվո դեմ իր գրքին մեջ կատարված նվաստացուցիչ արտահայտություններն ալ, իրեն չենք վերագրած վերահիշյալ պատճառով:

Իսկ իր «Բաց նամակ»ին մեջ մեր եկեղեցվո դեմ կատարված այդ վարկաբեկիչ արտահայտությանց պատասխանատվությունը զարմանալիորեն ինք իր վրա վերցուցած է, առանց անդրադառնալու, որ Հալեպի բեռնակիրներն անգամ պիտի չշալկեին, եթե իմանային անոր պարունակությունը:

Վեր. Վ. Թուֆիկյանի թված վերոհիշյալ բազմաթիվ հայհոյությունները ցույց կու տան նկարագիր մը, որ գլխովին անհարիր է իր անձին և գործին: Նկարագիր մը, որ հակապատկերն է իր քարոզած Ավետարանին:

Ի կողմե անձնապես ինձի դեմ կատարած այդ հայհոյությունները կը ստիպեն զիս ներկայացնելու իր ցուցադրած նկարագիրը...

1. – Ան մեկ կողմե կը հայտարարե, որ իրապես կը հավա-

տա Հայաստանյայց Եկեղեցվո «Առաքելական ծագումին», իսկ մյուս կողմն ամեն կարգի անճիշտ և սուտ փաստարկություններով կը փորձեն ցույց տալ, որ «Հայ Եկեղեցվո Առաքելական ծագումը շինծու է»:

2. – Ան աներկբայորեն կը հիշեն միշտ, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեր «Մայր Եկեղեցին» է, որուն հետ միության մը ցանկությունն ալ կը հայտնեն, իսկ մյուս կողմն՝ կը փառաբանեն «Հայոց Եկեղեցվո» երգվյալ թշնամի Սահակ Կոզյանը (հայ կաթողիկ եպիսկոպոս) և մեկ քանի ուրիշ Հայ Եկեղեցվո հակառակորդներ:

3. – Ան անվարան կերպով կը հայտարարեն, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին «եղավ գլխավոր ազգակը հայ ազգի քաղաքականության և հառաջադիմության, իսկ մյուս կողմն կը փորձեն ապացուցանել, որ Հայաստանյայց Եկեղեցին ունի «մեղքեր» և «ապականություններ»:

Վեր. Վ. Թուֆիկյան համալսարանական կրթության տեր անձ մը ըլլալով և հեղինակ քսանն ավելի գրքերու, չանդրադառնա՞ր, որ իր վերոհիշյալ երկդիմի արտահայտություններով, կը հաստատեն իր անուղղամիտ վարքը:

(Lorenzo Gogie) Սահակ Կոզյանը, Հայոց Եկեղեցվո դեմ իր անճկելի ատելությամբ և տգիտությամբ՝ ուղղամիտ է: Ան Հայոց Եկեղեցվո դեմ ունեցած իր ատելությունը կը հայտարարեն փողով և թմբուկով:

Վեր. Վ. Թուֆիկյան թե՛ Հայ Եկեղեցվո հետ է և թե՛ դեմ է:

Մեր պատմության դժնե ելևէջներուն ընդմեջեն, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հանճարներ տված է հայ ժողովուրդի հարատևությունը ապահովելու և մեր ժողովուրդի փառքը կերտելու համար:

Այդ հանճարներն են.

Ս. Գրիգոր Լուսավորիչը, որ ոչ թե լոկ եղավ ճարտարապետը Հայ Հոգիին, այլ նաև ճարտարապետը՝ Առաջին Հայ

Քրիստոնյա Եկեղեցիին, նաև Առաջին ճարտարապետը՝ Քրիստոնյա եկեղեցիներուն:

Անզուգական Հանճար մըն էր Ս. Մեսրոպ Մաշտոցը, որ իր Հայ գրերի գյուտով մշտենջենացուց Հայ ազգի գոյատևումը:

Հանճարներ էին նաև Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Անանիա Շիրակացին, Կոմիտաս Վարդապետը...

Այս հանճարներին ծնունդ տվող Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Տունն է Աստուծո և Տունն է Հայ Հոգիին:

Ավելի քան 17 դարերու ընթացքին շատ է եղած թիվը Հայ Եկեղեցվո դեմ պայքարողներու: Շատ ավելի մեծ եղած է թիվը՝ Հայ Եկեղեցին փառաբանողներու: Անվերջ պատերազմներ և կրոնական հալածանքներ ևս շատ անհարկի դժվարությունաց մատնած են թե՛ մեր Եկեղեցին և թե՛ մեր ժողովուրդը: Բայց Հայաստանյայց Ս. Եկեղեցին միշտ մնացած է հաստատ և՛ անսասան:

Անհավատալի կը թվի, որ Հայ Ավետարանական անձ մը կամ անձեր կը հանդգնին Հայ Ազգի փառքն ու պարծանքը հանդիսացած Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին «ապականություն մեղքով» անարգել:

Հայ ժողովուրդը իր Եկեղեցվո հետ է հավիտյան և պետք չունի երբեք իր Ս. Եկեղեցին «Ապականության մեղքով» արատավորել փորձող հայանուն թշվառականներու և երկու թելի վրա ոստոստող լարախաղացներու:

N

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ Բ. ՄԱՍԻ

Սուրիո և Լիբանանի մեջ Հայ Ավետարանական հոգևորականներ, ավելի մեծ եռանդով լծված են հայ կրթական գործունեության, քան թե մարդորսության: Նույն գնահատականը կրնանք հայտնել նաև Հայ Կաթողիկե հոգևորականներու կրթական գործունեության նկատմամբ:

Եվ սակայն ներկայիս Հայ Ավետարանական պատվելիներու, «Հայաստանյայց Եկեղեցվո» անունով ծպտված, Հայաստանի մեջ կատարած քարոզչական գործունեությունը, համազոր է մաքսանենգության: Կրոնի անունով կատարվող խարդախություն: Որովհետև այդ գործունեությունը, ինչպես կը վկայեն Հայաստանյան թերթեր, տեղի կունենա լոկ «հոգեորսության» (մարդորսության) նպատակով: Եվ այս` ներելի չէ անշուշտ:

Վանաձորի մեջ տեղի ունեցած միջադեպ մը կը պատկերացնեն «ավետարանչական»ներու կողմե կատարված նույն և նման զզվելի գործունեություն մը: Վանաձորի բնակչության մեջ, ավետարանչականներու թիվը գրեթե ոչինչ է: Եվ սակայն «ուռուցիկ գրպաններով» ավետարանական գործիչներ, գացած են հոն, և զարտուղի միջոցներով անիրավ արտոնություն մը ձեռք ձգած են, եկեղեցական համալիր մը շինելու համար հոն` աղետեալներե բնակեցված շենքերու վրա:

Ահա է ինչ կը գրեն նույն քաղաքի բնակիչ և «Ազգ» թերթի թղթակից, Գազիկ Սիմոնյանը.

«Վանաձորի «Տիգրան Մեծ» պողոտայի թիվ 6, 8, 10 և 12 շենքերի բնակիչները, օրը ցերեկով ականատես եղան բակում հոնդացող տրակտոր-բուլդոզրների ավերիչ գործին: Երեսաների բակային ճամբարը քանդվում էր, հենց երեխաների

աչքերի առջև: Աղետոյալ բնակիչներին համար, ոչ թե լուկ մի շենք-շինուկթյուն չի կառուցվում, բայց և քանդվում է ինչ որ կա: Եվ հոն գցվում են ավետարանչական եկեղեցու հիմքեր»:

Երբ «բոթը» կիմանան բակի բնակիչները, կը «վճռեն որ իրենց ոչ մի նման եկեղեցի էլ հարկավոր չէ: Կընդդիմանան և կը բռնեն վերին ասյանները տանող ճանապարհները»:
Անոնք կը կասեցնեն այս անիրավ շինուկթյունը:

Կը պարզվի նաև որ «ուռուցիկ գրպաններով ավետարանչական» հոգևորականներ, ի՛նչպիսի հակոտնյա միջոցներով հաջողեր էին ձեռք անցնել նման անճիշտ և ապերասան թուլտվուկթյուն մը:

Եվ սակայն նման անիրավ ձեռնարկներու իրագործման համար նյութական մեծ գումարներ են անհրաժեշտ: Արդ՝ հարց է գիտնալ, թե ո՞ւր կը հայթայթվին այդ առասպելական գումարները:

“A. M. A. A.”

Այս չորս տառերու իմաստը հետևյալն է. “Armenian Missionary Association of America” - «Ամերիկայի Հայ Միսիոնարական Ընկերակցուկթյուն»:

Բազմաթիվ տարիներ առաջ հիմնված այս ընկերակցուկթյան տրամադրուկթյան տակ կան միլիոններու հասնող առասպելական գումարներ:

Այս գումարները հատկապես կը գործածվին Բողոքական-Ավետարանչական հարանվանուկթյան տարածման համար, միսիոնարական նպատակներու:

AMAA- ի համար բնավ տարբերուկթյուն չէ ըրած անցյալին, երթալու մինչև Չինաստան և Ափրիկյան երկիրներ, նյութական միջոցներ ընծայելու, որպեսզի այդ երկիրներու մեջ ևս Ավետարանչական բողոքական հարանվանուկթյունը որպես՝ Քրիստոնեուկթյուն տարածվի:

Մենք շուրջ 35 տարիներ առաջ ունեցանք տխուր փորձա-
նություն մը AMAA-ի այն տարիներու նախագահ՝ Պատվելի
Զոփուրյանի մը հետ:

Այդ տարիներուն մենք տնօրենն էինք Մեսրոպյան Ազգա-
յին Վարժարանի: Նոր բացված էր մեր վարժարանը, և մենք
ունեինք նյութական ծով կարիքներ:

Դպրոցի աշակերտությունն ծնողները մեծ մասամբ ի վիճա-
կի չէին ուսումնաթողակ վճարելու: Որպես տնօրեն՝ մեր բա-
րոյական պարտավորություններեն մեկն էր նաև նյութական
միջոցներ գտնել մեր ուսանողներու կարիքներուն համար:

Ռինեինք շուրջ 30 Հայ Ավետարանչական ուսանողներ և
երկու Հայ Ավետարանական ուսուցչուհիներ: Այդ ուսուցչու-
հիներեն մին թելադրեց մեզի, որ դիմենք AMAA-ի նախագահ
Պատ. Զոփուրյանի, խնդրելով, որ մեր Հայ Ավետարանական
ուսանողներու ուսումնաթողակներու ի նպաստ՝ օժանդակու-
յուն կատարեն մեզի:

Դիմեցինք և մերժվեցանք: Առիթ ունեցանք, սակայն, ան-
ձամբ տեսնվելու այս պատվելիին հետ, երբ Լոս Անջելոս կը
գտնվեր ան:

Պատվելին հստակորեն հասկցվեց որ AMAA-ը լոկ միսիո-
նարական նպատակներու համար կը կատարե իր հատկացում-
ները: Պատվելի Զոփուրյան նաև քննադատեց մեզ, որ մեր
վարժարանին մեջ հայերեն լեզու կը սորվեցնեինք մեր աշա-
կերտներուն:

Այս տխուր միջադեպը կապացուցանե, որ Հայ Ավետարան-
չական ընկերակցություններու նյութական միջոցները կը
գործածվին միայն իրենց եսակեդրոն նպատակներուն հա-
մար:

AMAA-ը ներկայիս փոխած է իր անունը: Ան կը կոչվի «Հայ
Ավետարանական Համաշխարհային Խորհուրդ»: Վեր. Վ. Թու-
թիկյանն է այս Խորհուրդի նախագահը ներկայիս:

Վեր. Վ. Թութիկյան իր Հայ Ավետ. Եկեղեցվո 150-ամյակը

գրքին մեջ, հայտնած էր իղձ մը, օր մը միանալու Հայաստան-
յայց Եկեղեցվո հետ, որպես «Մայր և որդվո»:

Այդ իղձի իրագործման համար անհրաժեշտ պիտի ըլլար,
անշուշտ, որ Հ. Ա. Հ. Խորհուրդի մեծ հարստությունները ամ-
բողջապես ընծայվեին Հայ ժողովուրդի բոլոր կարիքներուն:

Նման պայման մը մեծապես պիտի ՏՐՏՄԵՅՆԵՐ անշուշտ
բոլոր պատվելիները անխտիր, ճիշտ այնպես, ինչպես ՏՐՏՄԵ-
ՅԱՎ Ավետարանի այն երիտասարդը, որ օր մը Հիսուսի հան-
դիպեցաւ և հարցուց - «Վարդապետ բարի, ի՞նչ կրնամ ընել,
որ արժանի դառնամ հավիտենական կյանքի»:

Հիսուս ըսավ անոր. - «Որպեսզի կատարյալ ըլլա այդ իղ-
ձիդ իրագործումը, վաճառե հարստությունդ և բաժնե աղ-
քատներուն»:

Երիտասարդը ՏՐՏՄԵՅԱՎ, որովհետև շատ հարուստ էր:

Բայց թող չտրտմին Հայ Ավետարանական պատվելիները:
Հայ ժողովուրդը պետք չունի իրենց «խորհուրդներու» խորհր-
դավոր դրամներուն: Հեռու թող կենան լոկ, մարդորսություն-
ներ կատարելէ Հայաստանի մեր ժողովուրդեն ներս:

ՈՒՒՏ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Մեր գրած Ա. հոդվածը «Հայաստանյայց Եկեղեցվո Անուն-
ները Աճուրդի Հանված չեն», մեր ընթերցողներու մեծ մասին
կողմէ արժանացաւ ջերմ գնահատման:

Իմացանք նաև, որ նույն այդ հոդվածը որպես brochure,
տպագրված է Հայաստանի մեջ և ցրված՝ ժողովուրդին: Շատ
է թիվը անոնց, որոնք հեռաձայններով, նամակներով և անձ-
նական տեսակցություններով իրենց ջերմ գնահատություն-
ները հայտնեցին մեզի:

Անոնցմէ մին, հատկապես Ֆրանսայի Մարսիլիա քաղաքէն,
Հոգ՝ Կ. Վաչե Օ. Վրդ. Իգնատիոսյան, իմ գրութեանս նկատ-
մամբ իր անվերապահ հիացումը հայտնելէ ետք, հայտնած էր

նաև իր զայրույթը, իր կողմն պատրաստված հողվածով մը՝ ընդդեմ անոնց, որոնք գարշելի հարձակումներ կատարած էին իմ անձնականությունս վրա¹: Անոնց դեմ հատկապես, որոնք Հայաստանյայց Եկեղեցվո հանդեպ իմ ծառայությունս ուխտը հարցականի տակ փորձած են դնել: Որովհետև ժամանակին չէին կրցած պահել եկեղեցականի հանգամանքս:

Վաչե Հայր Սուրբին, ինչպես նաև ինձի համար, անհավատալի և ապշեցուցիչ կը թվի, այս թշվառականներուն կողմն՝ դրված վերոհիշյալ հարցադրումը:

Ինչո՞ւ: - Որովհետև բողոքականություն հառած Հայ Ավետարանականներու հիմնադիր ռահվիրան և միակ սուրբը՝ Մարթին Լուտեր, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցվո վարդապետ մըն էր: Ան՝ ոչ թե լոկ լքեց իր վարդապետական կարգը, այլ նաև՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցվո ծառայելու իր ուխտը դրժեց: Տարբերությունը այն է, որ մենք բնավ ուխտազանց չեղանք Հայաստանյայց Եկեղեցվո ծառայություն մեր ուխտին դեմ: Հայաստանյայց Եկեղեցվո համար երկու ամենօրյա դպրոցներ հիմնելու մեջ կարևոր դեր կատարած ենք մենք: Տարիներ շարունակ ծառայած ենք Հայաստանյայց Եկեղեցվո, որպես դպրոցի տնօրեն, որպես հոգաբարձու և երեսփոխան:

Ներկա գիրքը ևս պերճախոս վկայություն մըն է՝ Հայաստանյայց Եկեղեցվո հանդեպ մեր տածած որդիական սիրուն:

Հայաստանյայց Եկեղեցին կը պատկանի Հայ Ազգին, որ հիմնվեցավ 1700 տարիներ առաջ, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով:

J

¹ Վաչե Հայր Սուրբի վերոհիշյալ հողվածը լույս տեսած է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի պաշտոնաթերթ՝ «Սիոն» ամսագրի վերջին թիվին մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԱԽԱԲԱՆ | 3 |
| ԿԱՐԵՎՈՐ ԼՈՒՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԻ ՃՇԳՐԻՏ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ | 7 |
| ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒՆ ՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՀԱՆՎԱԾ ՉԵՆ (ՎԵՐ. Վ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԻՆ ԱՌԹԻՎ) | 15 |
| ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՆԱԲԱՐՈՂՆԵՐ - Ա. (ՀԱԿՈԲ ԼՈՒՍԱՐԱՐՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՊԱՐԳԵՎ Ն. ՏԱՐԱԳԺՅԱՆ) | 25 |
| ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՆԱԲԱՐՈՂՆԵՐ - Բ. (ՀԱԿՈԲ ԼՈՒՍԱՐԱՐՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՊԱՐԳԵՎ ՏԱՐԱԳԺՅԱՆ) | 37 |
| «ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՆԵՐԻ» ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ | 49 |
| «ԿԱԹՈՂԱԿԱՆ ԳԻՐՔ» ՄԸ, ԼԻ՝ «ԿՈԹՈՂԱԿԱՆ» ՍՈՒՏԵՐՈՎ | 59 |
| «ԲԱՅ ՆԱՄԱԿ»Ի ՄԸ ՊԱՏԱՍԽԱՆԸ | 77 |
| ԵԶՐԱՓԱԿՈՒՄ Բ. ՄԱՍԻ | 91 |